2025, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (684)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 17-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը:

Բերկրառատ տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագիչ Սրբազանն իր քարոզում մասնավորապես նշեց. «Վերափոխումը միայն հիշատակում չէ անցյալում տեղի ունեցած մի իրադարձության: Այն կենդանի և իրական ներկայություն է մեր հոգևոր կյանքում, որովհետև մեզ հրավիրում է կանգնելու հավիտենական կյանքի և մահվան, անցողիկի և անանցի, երկրայինի և երկնայինի սահմանին ու այնտեղ՝ լռության մեջ, տեսնելու այն մեծ խորհուրդը, որ «մահու քնից» Աստվածածին Մարիամն անցավ դեպի «Հայրական տուն, Որդու փառքի մեջ»:

Մուշեղ Սրբազանն ընդգծեց, որ Աստվածաշունչն ու սրբազան ավանդությունը միասին հյուսում են այս տոնի հիմքը, որը ձևավորվել է Եկեղեցու աղոթքներում, սրբերի տեսիլքներում, հավատացյալների սրտերում ապրող հոգևոր զգացումների մեջ, որոնք մեզ ոչ միայն տեղեկություն են տալիս, այլև գրավում են մի կենդանի խորհրդի մեջ:

«Տոնի խորքում պատգամ կա՝ ուղղված մեզանից յուրաքանչյուրին. մահը, որքան էլ դառն ու ցավալի է, Քրիստոսով այլևս մեր կյանքի վերջին հանգրվանը չէ, այլ անցում դեպի հավիտենականություն: Աստվածամոր վերափոխմամբ մենք տեսնում ենք մահվան հաղթանակի կատարյալ օրինակը մարդկային պատմության մեջ: Տիրամայրն անցավ մահվան քնի միջով, բայց նրա մարմինը չմնաց երկրում, այլ անմիջապես ընդունվեց փառքի օթևաններում: Վերափոխումը մեզ հիշեցնում է, որ քրիստոնեական հավատքը մահվան նկատմամբ չունի հուսահատության գլխիկոր կեցվածք: Հակառակը՝ այն խոսում է փոխակերպման մասին: Մարիամը ոչ թե «մահացավ», այլ «ննջեց», քանի որ քունը ժամանակավոր վիճակ է, որից հետո կա արթնացում: Սուրբ Մարիամի վերափոխումն այն հաստատումն է, որ Քրիստոսով ապրող մարդը մահվան մեջ ննջում է, իսկ նրա հոգին արթնանում է Աստծու գրկում:



Սիրելիներ, մեզ համար կա այլ պատգամ ևս: Վերափոխումը պարզապես մահից հետո տեղի ունեցող մի հրաշք չէ: Այն սկսվում է այստեղ՝ մեր երկրային կյանքի ընթացքում, և որքան մենք թույլ ենք տալիս, որ Աստծո առատաբուխ շնորհները մեզ մաքրեն, փոխակերպեն և սրբեն մեր սրտերն ու մտքերը, այնքան մենք արդեն ապրում և հաստատում ենք մեր անձնական «վերափոխումը»»,— ասաց Սրբազան Հայրը՝ հավելելով, որ Աստվածածինը մշտապես եղել և մնում է Եկեղեցու մայրը, հավատացյալների բարեխոսը և յուրաքանչյուրի հոգևոր ուղեկիցը:

«Աստվածամայրը մեզ համար մնում է սրբության կատարյալ օրինակ և իր կյանքով սրբության հասնելու իրատեսական ուղին է ցույց տալիս: ....Նա ցույց տվեց, թե ինչպես կարելի է Աստծո կամքը կատարել առանց տրտնջալու նույնիսկ դժվարությունների և տառապանքի պահին և հասնել սրբության»,— նշեց պատարագիչ Սրբազանը:

Վերջում Սրբազան Հայրը հորդորեց հավատավոր հայորդիներին բացել իրենց հոգիները, որպեսզի Աստվածամոր վերափոխման տոնը դառնա ամենքի համար մշտական հիշեցում, որ կյանքի վերջնանպատակը երկինքն է, և որ Աստծուն նվիրված կյանքը չի ավարտվում գերեզմանով, այլ սկսվում է հավիտենականության մեջ՝ արժանացնելով Տիրոջ անանց փառքին:

Սուրբ Պատարագի ավարտից հետո եկեղեցականաց թափորը Մայր Տաճարից ուղղվեց դեպի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ, Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի հանդիսապետությամբ, կատարվեց «Խաղողօրհնեքի» հանդիսավոր կարգը: Օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես է եկել հայտարարությամբ

Գերաշնորհ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին և ազգային բարերար Սամվել Կարապետյանին կալանքի տակ պահելը երկարեցնելու որոշումներով դատարանը հերթական անգամ ոտնահարեց արդարադատությունը՝ կրկին պարզորոշ դարձնելով իշխող քաղաքական ուժից դատարանների լիակատար կախվածությունը:

Նման անհիմն որոշումներով արդարադատությունը ձեռք է բերում պատժիչ նշանակություն, իսկ դատարանները վեր են ածվում ազատ խոսքի և կրոնի ազատության բռնաճնշման գործիքի:

Այսպիսի գործելաոճը բնորոշ է ամբողջատիրական համակարգերին և աղերս չունի հենց իշխանությունների կողմից տարփողվող ժողովրդավարական արժեքների հետ:

Եկեղեցու, եկեղեցականների և Եկեղեցու աջակիցների նկատմամբ կիրառվող բռնաճնշումները և տեղեկատվական ահաբեկչության միջոցները չեն կարող լռեցնել խղճի և արդարության ձայնը:

Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի և ազգային բարերար Սամվել Կարապետյանի իրավունքները պետք է անհապաղ վերականգնվեն, բացառվի ապօրինի հետապնդումը, և նրանք պետք է անհապաղ ազատ արձակվեն կալանքից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
15. 08. 2025 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է տիար Սամվել Կարապետյանին՝ ծննդյան 60-ամյակի առիթով

Օգոստոսի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական նամակ է հղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ազգային մեծանուն բարերար Սամվել Կարապետյանի ծննդյան 60-ամյակի առիթով:

Վեհափառ Հայրապետի շնորհավորագրում ասվում է.

«Սիրելի՛ պրն. Կարապետյան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք հղում Ձեզ՝ վաստակաշատ հայորդուդ, և ջերմորեն շնորհավորում ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

Պատկառելի այս հոբելյանը դիմավորում եք՝ գտնվելով հանիրավի ազատազրկման մեջ՝ ի պաշտպանություն մեր Սուրբ Եկեղեցու դրսևորած Ձեր արիասիրտ կեցվածքի և խրոխտ ոգու համար: Ցավոք, հնարավորություն չունենք Ձեզ այցելելու և անձնապես Մեր բարեմաղթանքները Ձեզ փոխանցելու: Սակայն մեր հոգևորականաց և հավատավոր ժողովրդի հետ միասին աղոթքներով Ձեզ հետ ենք: Տարակույս չունենք, որ ամուր եք հոգով և աներեր՝ Ձեզ բնորոշ հաստատակամության և սկզբունքայնության մեջ:

Բազումողորմ Աստված առատորեն օրհնել է Ձեզ և արժանացրել բազում շնորհների և պարգևների՝ բարեզարդելով Ձեր կյանքը նշանակալի հաջողություններով և իրագործումներով: Այդ ճանապարհին Տերը Ձեզ ուղեկից է դարձրել Ձեր սիրելի ընտանիքին, գործընկերներին, Ձեր տեսիլքներին հավատ ընծայած հազարավոր անձանց: Ամենատարբեր ոլորտներում արձանագրած Ձեր ձեռքբերումները Դուք ինքնաբուխ հոգով ծառայեցրել եք մեր ազգին՝ նպաստելով Հայաստանում, Արցախում և աշխարհի տարբեր հայկական համայնքներում առկա բազմաթիվ խնդիրների հաղթահարմանը և հայ կյանքում զարգացման ծավալուն ծրագրերի իրագործմանը:

➥ էջ 2

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ

Օգոստոսի 31-ին Միածնաէջ Մայր Տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, մատուցվեց Սուրբ Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին կրթական կառույցների ներկայացուցիչներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ, մանկավարժներ և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ:

Սուրբ Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, 2025–2026 թթ. ուսումնական նոր տարեշրջանին ընդառաջ տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգ:

Այնուհետև Նորին Սրբությունն իր հայրապետական օրհնությունը բերեց կրթության ոլորտի երախտավորներին:

Հայոց Հովվապետը, կարևորելով հայ ժողովրդի զավակների կրթության և դաստիարակության սրբազան գործում մանկավարժների բերած օգտաշատ ներդրումը, մասնավորապես նշեց. «Հայոց Եկեղեցին բոլոր ժամանակներում հետամուտ է եղել գիտության և մշակույթի զարգացմանը՝ առաջնորդվելով Սահակ-Մեսրոպյան սերնդի ոգով և լուսավորչական շարժման գաղափարախոսությամբ: Եկեղեցիներին ու վանքերին կից հիմնադրված ծխական դպրոցներն ու նշանավոր համալսարանները դարձել են սերունդների դաստիարակության յուրօրինակ դարբնոցներ, որտեղ ջամբվող կրթությամբ կերտվել են մեր ժողովրդի հոգևոր և ազգային ինքնությունը, հայրենի հողի նկատմամբ սերն ու հանձնառության գիտակցությունը և հավատարմությունը քրիստոնեական արժեքներին»:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ընդգծեց նաև, որ Հայոց Եկեղեցին հոգեփրկչական առաքելությանը զուգահեռ նպաստել է իր զավակների հոգեմտավոր աճին՝ ապահովելով հավատի, գիտության և գիտելիքի ներդաշնակությունը:

«Մերօրյա բազմաբևեռ և բազմամշակույթ աշխարհում, որտեղ վերանում են նաև սահմաններն ու բաժանարար գծերը, առավել են կարևորվում ժամանակին համահունչ կրթությունը, անհատի ճիշտ և առողջ աշխարհայացքի և կայուն արժեհամակարգի ձևավորումը, որպեսզի անձը պաշտպանված լինի անցանկալի ներգործություններից: Գիտության և տեխնոլոգիաների սրընթաց զարգացման հետ մեկտեղ մարդն այսօր ապրում է արժեքաբանական լուրջ ճգնաժամ, հաճախ հայտնվում իր ինքնությունը վտանգող սպառնալիքների առջև: Նմանօրինակ երևույթների ազդեցություններից զերծ չէ նաև մեր ժողովուրդը թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում: Սպառողական մտայնությունը փորձությունների դուռ է բացել նաև մեր զավակների համար, երբ իրական արժեքները փոխարինվում են կեղծ գաղափարախոսություններով, երջանկությունն ու խաղաղությունը չափելի են դառնում սոսկ շոշափելի, նյութական ապահովվածությամբ: Այս ամենի հաղթահարումը պահանջում է հավաքական, համախումբ ջանքեր՝ ձևավորելու այնպիսի հայորդի և քաղաքացի, որն ունակ է իր գիտելիքներով ու ազգային մտածողությամբ դիմակայելու ժամանակակից մարտահրավերներին: Մեր կրթության միջոցով փոխանցվող արժեհամակարգը պիտի գրավականը դառնա ազգի ինքնության պահպանման և հարատևության ապահովման: Երկրում տեղ գտնող խնդրահարույց ընթացքների լույսի ներքո հայրենի կրթական ոլորտում տարերայնորեն ձեռնարկվող քայլերը, որդեգրվող կամայական մոտեցումները խիստ տարակուսելի են դարձնում դրական վերջնարդյունքների հույսերը»,– ասաց Նորին Սրբությունը՝ ցավ ի սիրտ արձանագրելով, որ այսօր արարողությանը ներկա պետք է լիներ նաև Մայր Աթոռի Կրթական հարցերի հանձնախմբի ատենապետ Գերաշնորհ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը, որը Գերաշնորհ Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի, Մայր Աթոռի ազգային բարերար Սամվել Կարապետյանի և մի շարք հայորդիների հետ անհիմն մեղադրանքներով ապօրինի ազատազրկման մեջ է:

Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նկատեց, որ այս մտահոգիչ երևույթը նույնպես հետևանք է իշխանությունների կողմից Եկեղեցու նկատմամբ վարած քաղաքականության և երկրում ձևավորված անհանդուրժողականության մթնոլորտի:

Վերջում Հայոց Հովվապետը կրթության մշակներին հորդորեց հավատարիմ մնալ կրթության ասպարեզում արժեքավոր ավանդներին, արդի գիտության ձեռքբերումների հետ հայորդիների մեջ սերմանել հունդերը հավատքի, հայրենասիրության և ազգասիրության, ինչպես նաև պաշտպանել մատաղ սերնդին խորթ բարքերից ու կործանարար գաղափարախոսություններից, կրթել բարոյական արժեքներով առաջնորդվող, արդարության և ճշմարտության պաշտպան, օրինահարգ անհատների:

Հավարտ Պատարագի սրբազան արարողության, ի պատիվ հրավիրյալների, տեղի ունեցավ ընդունելություն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է տիար Սամվել Կարապետյանին՝ ծննդյան 60-ամյակի առիթով

← էջ 1

Ազգօգուտ և հայրենանպաստ Ձեր գործունեությամբ Դուք արժանացել եք մեր ժողովրդի սիրուն ու հարգանքին՝ ազգային բարերարի վսեմ կոչումով: Ձեր արդար վաստակն ի սպաս եք բերել նաև Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառությանը: Ձեր եկեղեցասիրությունն ու էջմիածնասիրությունը բացառիկ են ու արարող՝ արդեն իսկ արձանագրված Հայոց արդի պատմության լուսավոր էջերում:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև աղոթք ենք ընծայում երկնավոր Տիրոջը՝ հայցելով շուտափույթ վերադարձ Ձեզ ընտանեկան օջախ: Թող Ամենակալ Աստված պարգևի Ձեզ կենաց արևշատություն, արիություն ու ամրություն փորձությունների մեջ և ուժ ու համբերություն՝ սիրելի Կարապետյան ընտանիքին: Թող Բարձրյալ Աստված խաղաղ ու անվտանգ պահի մեր հայրենիքը, արժանապատիվ և բարօր կյանք պարգևի հավատավոր մեր ժողովրդին»:

Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Հոգեշնորհ Տ. Դերենիկ աբեղա Սահակյանը, ազատվելով Դամասկոսի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Իրաքի հայոց թեմում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մեր ձևով» շարժման ներկայացուցիչներին

Օգոստոսի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ուխտավորաբար այցելած «Մեր ձևով» ժողովրդական կամավորական շարժման համակարգող խորհրդի անդամներին:

Հանդիպմանը շարժման համակարգող Նարեկ Կարապետյանը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց շարժման հիմնական նպատակներն ու գործունեության առաջնահերթությունները՝ միտված հայրենական կյանքում առկա հիմնախնդիրների հաղթահարմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը փոխանցեց շարժման ներկայացուցիչներին և գոհունակություն հայտնեց, որ շարժումը պիտի գործի ազգային բարերար Սամվել Կարապետյանի գաղափարներով՝ ի նպաստ երկրի զարգացման ու առաջընթացի՝ ցավով անդրադառնալով նաև, որ նա շարունակում է ապօրինաբար ազատազրկված մնալ ի պաշտպանություն Հայոց Եկեղեցու դրսևորած իր նախանձախնդիր ոգու համար:

Հայրենիքի առջև ծառացած ներքին և արտաքին մարտահրավերների դիմագրավման համար Նորին Սրբությունն առաջնային և հրամայական նկատեց ազգային միասնականության ամրապնդումը և աշխարհասփյուռ հայ ժողովրդի ներուժի համախմբումը: Այս առումով Վեհափառ Հայրապետը կարևորեց համագործակցությունը ազգային և հոգևոր կառույցների հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր գնահատանքը հայտնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ցուցաբերվող զորակցության, շարժման ռազմավարության շրջանակներում ազգային և հոգևոր արժեքների, ընտանիքի ինստիտուտի զորացմանն ուղղված առանձնահատուկ ուշադրության համար:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետը մաղթեց տիար Սամվել Կարապետյանին շուտափույթ վերադարձ ընտանեկան օջախ՝ ընդգծելով, որ Մայր Աթոռը պիտի շարունակի կարելին ի գործ դնել բարերար տիար Սամվել Կարապետյանի և Միքայել ու Բագրատ արքեպիսկոպոսների ազատ արձակման ուղղությամբ: Նորին Սրբությունն ազգօգուտ ու արդյունավոր առաքելություն ցանկացավ շարժման ներկայացուցիչներին:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչները մասնակցեցին էկումենիկ շաբաթին

Օգոստոսի 20–25-ը Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում տեղի ունեցավ «Աստծո խաղաղության ժամանակն է» խորագրով էկումենիկ շաբաթը՝ նվիրված 1925 թ. Ստոկհոլմի էկումենիկ պատմական համաժողովի 100-ամյակին, որը խոստումնալից սկիզբ էր ժամանակակից էկումենիկ շարժման համար: Միջոցառումը կազմակերպել էր Շվեդիայի եկեղեցիների խորհուրդը:

Էկումենիկ շաբաթվա ծրագիրը բազմաբովանդակ էր՝ գիտական և աստվածաբանական միջոցառումներ, լիագումար նիստեր և քննարկումներ, որոնց ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց արդի աշխարհում խաղաղության, արդարության և քրիստոնեական միասնության հրամայական խնդիրներին:

Միջոցառմանը մասնակցում էին տարբեր եկեղեցիների պետեր, հոգևոր առաջնորդներ, միջեկեղեցական գործիչներ, աստվածաբաններ և կրոնագետներ աշխարհի տարբեր երկրներից:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն էկումենիկ շաբաթվա ընթացքին ներկայացրին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Երեմիա՝ վերածննդի ձայնը խավարի մեջ

Նրա հոգին կոտրված էր ոչ թե թշնամուց, այլ իր ժողովրդի կուրությունից...

Մարդկության պատմությունը միայն թագավորությունների և ժողովուրդների ժամանակագրություն չէ, այլև Աստծու առաջնորդության սրբազան ուղի: Ժողովուրդների վերելքներն ու անկումները, ցնցումներն ու զարթոնքները, բոլորն իրենց խորքում կրում են մի ներքին շարժում՝ հոգևոր կենսունակության կամ նրա բացակայության հետևանք: Այդ իսկ պատճառով Սուրբ Գրքի մարգարեական ձայները երբեք չեն մարում պատմության ընթացքում: Այդ ձայները միայն անցյալի արձագանք չեն, այլև հավիտենական ուղեցույց մարդկության համար:

Երեմիա մարգարեն հենց այդ ձայներից է: Նրա խոսքը՝ հուզիչ, խոր ու ցավով լեցուն, հնչում է ոչ միայն որպես դատաստանի զգուշացում, այլև որպես հույս ու ներշնչանք: Այն մարգարեություն է, որը ծնվել է սիրուց՝ Աստծու և Նրա ժողովրդի հանդեպ, ու հասցեագրված է բոլոր նրանց, ովքեր կանգնած են արժեքային ճգնաժամի ու հոգևոր լքման եզրին:

Երեմիա մարգարեն ապրեց պատմական այն ժամանակաշրջանում, երբ Հրեաստանն ընթանում էր դեպի անդունդ: Ք. ա. 7-րդ դարի վերջին և 6-րդ դարի սկզբին Իսրայելի ժողովուրդը գտնվում էր հոգևոր և բարոյական խոր անկման մեջ: Աստծու օրենքը մոռացված էր, իսկ կուռքերին զոհ մատուցելը դարձել էր օրինաչափ: Իրական հավատքը՝ որպես կենդանի հարաբերություն Աստծու հետ, մոռացության էր մատնվել, իսկ բարոյականությունը՝ խեղաթյուրվել:

Երուսաղեմի տաճարը՝ մի ժամանակ Աստծու ներկայության խորհրդանիշը, վերածվել էր արտաքին ծիսակատարության կենտրոնի՝ առանց ներքին մաքրության: Հենց այս դարաշրջանում, երբ մոտենում էր Բաբելոնի սպառնալիքը, և կործանումն անխուսափելի էր, Աստված կանչեց երիտասարդ Երեմիային: Սակայն մարգարեական առաքելությունը դյուրին չէր: Երեմիան, կանխատեսելով սպասվող դժվարությունները, փորձեց խուսափել. «Մի ասա, թե մանուկ ես, որովհետև պիտի գնաս այնտեղ, որտեղ քեզ կուղարկեմ և ինչ որ պատվիրեմ քեզ, պիտի խոսես: Մի վախեցիր մարդկանցից, ես քեզ հետ եմ և պիտի փրկեմ քեզ.... Ահա Իմ խոսքը քո բերանը դրեցի....» (Երեմ. 1:7–9): Աստծու կամքն անշրջելի էր, և այսպես սկսվեց Երեմիա մարգարեի առաքելությունը:

Երեմիան ասում էր այն ճշմարտությունը, որը ժողովուրդը չէր ուզում լսել: Նրա խոսքը խանգարում էր շատերին, տագնապ էր ներշնչում նրանց, ովքեր նախընտրում էին ապրել իբրև թե խաղաղության մեջ՝ չտեսնելով մոտեցող կործանումը: Նրա դեմ էին ելնում թե՛ կրոնական իշխանությունները, թե՛ քաղաքական վերնախավը: Նրան ծաղրում էին և արհամարհում, սպառնում էին և տանջում… Սակայն նա չէր լռում և լռելու իրավունք չուներ. «Ես ասացի. «Չեմ տա Տիրոջ անունը, այլևս չեմ խոսի Նրա անունից»: Սակայն իմ սրտում կարծես կրակ վառվեց, բորբոքվեց ոսկորներիս մեջ, ու ես ամեն կողմից լքված մնացի, չկարողացա հանդարտվել» (Երեմ. 20:9):

Երեմիան դարձավ մարգարե՝ ողբի, ցավի և մերժման: Ոչինչ չկասեցրեց նրա հավատարմությունը ճշմարտությանը: Նրա նպատակը ոչ թե դատապարտելն էր, այլ սթափեցնելը, արթնացնելը, դեպի ապաշխարություն առաջնորդելը և մաքրագործելը: Շուրջ 45 տարի նա ամենուրեք քարոզեց Աստծու խոսքը՝ ուրացած իր անձը, կանխատեսեց բարոյազրկված Երուսաղեմի և տաճարի կործանումը, ամեն ջանք գործադրեց՝ կանխելու մեղքերի մեջ թաղված ժողովրդի կործանումը և դարձի բերելու նրան, բայց հալածվեց թագավորի և ժողովրդի կողմից՝ բանտարկվելով ու տիղմով լի ջրհոր նետվելով: Երեմիայի հոգին կոտրված էր ոչ թե թշնամուց, այլ իր ժողովրդի կուրությունից... Տառապելով ժողովրդի անօրենություններից՝ Երեմիան, այնուհանդերձ, երբեք չլքեց նրան և շարունակ աղոթում էր Աստծուն իր ժողովրդի համար:

Հայ ժողովուրդը, որի պատմությունը հագեցած է ցնցումներով, կործանումներով ու վերածնունդներով, ունի մի յուրահատուկ նմանություն իսրայելացիների հետ: Մենք նույնպես անցել ենք տաճարների կործանման, հայրենազրկման, աքսորի, պատերազմների միջով: Սակայն այդ բոլոր փորձությունների ու ողբերգությունների մեջ մենք՝ որպես ազգ, չկորցրինք մեզ: Ինչպես իսրայելացիները Բաբելոնի գերության մեջ, այնպես էլ հայերը Դեր Զորի անապատներում, սիբիրյան աքսորավայրերում ու արտերկրի գաղթօջախներում կարողացան պահպանել իրենց հոգևոր ինքնությունը:

Մեզ համար տաճարը միայն շինություն չէ, այլև հավատքի ու հարության խորհրդանիշ: Երբ այն ավերվում էր, հայ քրիստոնյան իրեն վերածում էր քայլող եկեղեցու՝ Ավետարանը ձեռքին և խաչը սրտում...



Անհայտ հեղինակ. Երեմիան թագավորին ասում է, որ Երուսաղեմը կգրավվի, 1873 թ.

Էդուարդ Բենդեման. Երեմիան նստած է Երուսաղեմի ավերակների մեջ՝ պաշարումից հետո, 19-րդ դ.

Երեմիա մարգարեի խոսքերը հնչում են մեզ համար ոչ միայն որպես անցյալի հիշեցում, այլև որպես ուղեցույց ներկայի. «Հետ դարձիր, ո՛վ ուխտադրուժ Իսրայել,– ասում է Տերը,– իմ բարկությունը ես ձեզ վրա չեմ թափի, որովհետև ես ողորմած եմ,– ասում է Տերը,– հավիտյան ոխ չեմ պահի: Միայն թե ճանաչի՛ր քո անօրինությունը, որ ապստամբեցիր քո Տեր Աստծու դեմ և ճանապարհներդ փռեցիր օտարների առաջ ամեն կանաչ ծառի տակ, և իմ ձայնին չանսացիք,– ասում է Տերը» (Երեմ. 3:11–13): Սա կոչ է նաև մեզ: Սա նաև մեր ժամանակի պատգամն է:

Երեմիայի ամենավառ տեսիլքներից մեկն ուղղված է ապագային. «Այլ սա է այն ուխտը, որ այն օրերից հետո պիտի կապեմ Իսրայելի տան հետ,– ասում է Տերը:– Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն....» (Երեմ. 31:33): Այս խոստումը, որն իր լրումը գտավ Հիսուս Քրիստոսի մեջ, մեզ հիշեցնում է, որ վերածնունդը միշտ հնարավոր է: Աստված ուզում է, որ մենք ապրենք ոչ միայն օրենքի գրվածքով, այլև սրտի ներշնչմամբ: Նա որոնում է ներսից փոխված մարդուն, ներսից վերականգնված ազգին:

Այսօր մենք էլ, ինչպես Հրեաստանը Երեմիայի օրոք, կանգնած ենք ներքին ու արտաքին մարտահրավերների առաջ: Արտաքին թշնամիների նվաճողական սպառնալիքներից բացի՝ արտագաղթ, հոգևոր անտարբերություն, ազգային ինքնության մթագնում, արժեքային շփոթ, և սրանք պարզապես վիճակագրություն չեն, սրանք հոգևոր ախտանիշեր են: Եվ հենց այս հիմնապատկերին Երեմիայի ձայնը նորից կարող է հնչել մեր մեջ՝ վերադառնալու կենդանի Աստծուն, սրտի խոնարհության, ճշմարիտ աղոթքի և ներքին մաքրության: Նա չի խոսում որպես դատավոր, նա աղոթում է որպես մարգարե: Երեմիա մարգարեի ուղերձը դառն է, սակայն բուժիչ խոսք է՝ ներքին ազնվության և հոգևոր զարթոնքի: Այն պարզապես հին Իսրայելի պատմությունը չէ, այն հայ ժողովրդի համար նույնպես հայելի կարող է լինել: Այսօր՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին նոր սպառնալիքների պայմաններում, Երեմիայի ձայնը վերահնչում է որպես ահազանգ՝ վերադառնալու Աստծուն և մեր ազգային ինքնությանը: Պատմությունը վկայում է՝ այն ազգերը, որոնք կորցնում են իրենց հոգևոր կողմնորոշումը, դատապարտված են թուլացման ու ոչնչացման: Սակայն նրանք, ովքեր վերադառնում են իրենց արմատներին, կարող են գտնել նոր զորություն, վերագտնել կյանք ու արժանապատվություն:

Երեմիա մարգարեի գրքի ողբերգությունը վերածվում է օրհներգության բոլոր նրանց համար, ովքեր վերադառնում են Աստծուն: Այդ գիրքը համարձակություն է տալիս լաց լինելու, սակայն նաև հույս ունենալու: Դա մարգարեությունն է մի մարդու, որ չխոնարհվեց ճնշման տակ, մնաց հավատարիմ իր կոչմանը: Դա պատմություն է Աստված–մարդ հարաբերության, երբ Տերը, տեսնելով Իր ժողովրդի անկումն ու մոլորությունը, չվանեց նրան, այլ շարունակեց սիրել:

Այսօր, լսելով Երեմիայի խոսքերը, միգուցե շատ բան մեզ ծանոթ թվա: Դա պատժի պատմություն չէ. դա վերադարձի, ներման և վերածննդի պատմություն է: Դա կոչ է մեր ժողովրդին՝ ամուր պահելու ոչ միայն իր հայրենիքը, հավատքը, մշակույթն ու լեզուն, այլև հոգին, վերադառնալու դեպի աղբյուրը, որտեղից սկիզբ է առել մեր ինքնությունը:

Երբ 586 թ. Նաբուգոդոնոսոր արքան գրավեց Երուսաղեմը, Երեմիային ազատ արձակեց բանտից՝ առաջարկելով իր հետ գնալ և պատվով ապրել Բաբելոնում, բայց Երեմիան նախընտրեց լինել իր ժողովրդի հետ: Հրեաները սպանեցին Նաբուգոդոնոսորի նշանակած կառավարչին ու փախան Եգիպտոս՝ իրենց հետ բռնի տանելով նաև Երեմիային: Ավանդության համաձայն՝ Երեմիա մարգարեն մահացել է Եգիպտոսում. նրան քարկոծել են իր հայրենակիցները՝ կռապաշտությունը դատապարտելու համար:

Երեմիա մարգարեի հիշատակությունը Հայ Եկեղեցին նշում է Վերափոխմանը հաջորդող երկրորդ հինգշաբթի օրը:

Դավիթ սրկ. ՍԵՐԳԵՅԵՆԿՈ
Հայկ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նաիրյան սիրո «հանցապարտները» կամ մի քանի դրվագ 1937-ից

Բակունցի դեմ գրական-քաղաքական մեղադրանքներն ուժգնացան 1933 թվականից, երբ ազգային և պրոլետարական գրողների բախումը, աստիճանաբար հասունանալով, վերածվեց անխուսափելի առճակատման: Ապաշնորհ, ծառայամիտ քննադատությունը, որ այդ տարիներին տեր ու տիրակալ էր հռչակել իրեն գրական ամայացող դաշտում, ջանադրաբար արագացնում էր ստեղծագործ փաղանգի վերացումն ասպարեզից: Այդ զազրելի մրցակցության հետևանքը 1937-ի սպանդն է՝ գլխավոր հերոսների կյանքի ու ստեղծագործության ողբերգական ընդհատումով:

Ովքեր էին քննադատում Բակունցին, և ինչ ողբերգական հետևանքներ ունեցան դրանք գրողի համար: Բակունցի ողբերգության և ընդհանրապես այդ տարիների գրական արյունոտ պայքարում մեղքերի ծանրագույն բաժին ունի Նաիրի Զարյանը՝ ժամանակի տաղանդավոր գրողներից մեկը, բայց իշխող վարչակարգի խոսափողը: Աններելի է Զարյանի դրսևորած վարքագիծը Բակունցի պես անբասիր մարդու և գրողի հանդեպ, և մանավանդ աններելի են մամուլում Բակունցին հասցեագրված մեկը մյուսից խայտառակ այն հոդվածները, որոնց վերնագրերն իսկ բավական են՝ պատկերացնելու դրանց զրպարտողականության աստիճանը. «Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների դեմ», «Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության», «Կապը կտրած խմբապետը», «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» և այլն: Սույն հոդվածի շրջանակում չծավալվելով անհեթեթության չափերի հասնող, բայց ժամանակին այնքան ծանր հետևանքներ պատճառած այդ հոդվածների բովանդակության շուրջ, խնայելով Ն. Զարյանին՝ այնուամենայնիվ, անդրադառնանք դրանցից մեկին՝ «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» հոդվածին՝ տպագրված 1936 թվականին. «Ա. Բակունցը իր գրական ողջ գործունեության ընթացքում օձային հետևողականությամբ թույն է արտադրել իր բոլոր գրվածքներում.... Սահմանների լայնացման հույսը իր սեփական հույսն է, որ նա բերել է իր հետ իր ավանտյուրիստական կուսակցությունից: Իսկ խորհրդային հայ գյուղացին իր սեփական փորձով վաղուց է համոզվել, որ իր խորհրդային հայրենիքի սահմաններում, առանց աչք տնկելու հարևանի հողերին, ազնիվ աշխատանք թափելով՝ նա կհասնի և արդեն հասնում է ունևոր և կուլտուրական կյանքի: ....Նրա մեջ դեռ ապրում է դաշնակցականների, հայ ժողովրդի այդ ամենաոխերիմ թշնամիների ցնդաբանությունը «ծովից ծով Հայաստանի» մասին... Այստեղ նա ձայնակցում է ֆաշիզմի հետ ձուլված, ռասսայական տեսության ծիծաղելի ասպետ Նժդեհին, այդ կարիկատուրային, կիսագրագետ «հայկական Նիցշեին: ....Բակունցը ոչ միայն մազաչափ չի բարձրանում Ռաֆֆու ռասսայական թրքատյացությունից, այլև մի աստիճան ավելի խորն է թաղվում անասնական շովինիզմի թունավոր ճահիճը: Միթե պարզ չէ, որ Բակունցի բերանով խոսում է դաշնակ խմբապետը.... բացարձակ կոչ անելով դեպի Մարութա սարը» («Գրական թերթ», 1936, 20 օգոստոսի, թիվ 19):

Ցավալի է այս ամենի գիտակցումը՝ առավել ևս այն պատճառով, որ սա գրում է Ն. Զարյանը, և դա այն պարագայում, երբ ինքն անձամբ զգացել էր հայրենիքը կորցնելու ողբերգությունը, տեսել իր ժողովրդի հանդեպ կատարվող ոճիրը, կորցրել հարազատների: Եվ հիմա թուրքական յաթաղանով մորթված մի ողջ ժողովրդի՝ հրաշքով փրկված բանաստեղծ որդին, առանց ինքնաքննադատության ներքին զգացողության, ծանրագույն հանցանք է համարում բռնազավթված հայրենիքի հիշողությունը, կարոտն ու ցավը: Իր արարքի ծանրությունը կյանքի վերջին տարիներին զգացել է նաև Զարյանը և զղջման խոսքեր գրել՝ «Ասք Անդրանիկ զորավարի», «Զրույց մեռած բանաստեղծի հետ», «Ասք ի խորոց սրտի» և այլն:

«Ծիրանի փողը» պատմվածքի ինքնատեսակ քննադատությունից հետո նույն հոդվածում Նաիրի Զարյանը «Որդի որոտման» վիպակի մասին գրում է. «Որդի որոտման,— այս ծաղրական մականունով է կնքել Ա. Բակունցը գյուղի սոցիալիստական վերակառուցմանը նվիրված կոմունիստին: Եվ Բակունցը թշնամական ատելությամբ ջախջախում է նրան: ....Դաշնակցական իժն առանց հրաժարվելու իր թույնից և անգամ չփոխելով իր շապիկը՝ սողացել է մեր կուսակցության սրբազան ծոցը: Դավաճանները բացել են դռները նրա առաջ և նրա օձային մերկությունը ծածկել են խորհրդային լուսավոր քաղաքացու պսպղուն շապիկով.... Կուսակցության լավագույն զավակները տարիներ շարունակ տեսել են նրա խայթոցները, շոշափել են նրա թույնը մեր գրականության մեջ, ցանկացել են պատռել նրա շապիկը, թունազրկել նրան: Բայց Ա. Խանջյանն իր լակեյների միջոցով և իր անմիջական միջամտությամբ փակել է մարդկանց բերանը և դաշնակցական օձի ուսերին գցել է խորհրդային գրականության վարպետի շլացուցիչ ծիրանին.... Պատռված է Ա. Բակունցի շապիկը, և նա երևում է իր օձային քստմնելի մերկությամբ» (նույն տեղում):

Բակունցի դեմ ուղղված այս հոդվածը մատնանշում է նաև Զարյանի մյուս նման հոդվածների բովանդակությունը: Զարյանի «բակունցագիտությունը» ժամանակին հաղթեց, և Բակունցին գնդակահարեցին, Բակունցի ստեղծագործության վրա կողպեք ամրացրին: Բայց դա ժամանակավոր հաղթանակ էր և ժամանակավոր պարտություն: Այդպես է, որովհետև վերջնական հաղթանակը մնացած բոլոր ժամանակներում վերապահված է ոչ թե վարչական բռնի ուժին, այլ Բակունցի պես գրական ու մարդկային տեսակին:

Բակունցի արվեստը «ոչնչացնող» գրաքննադատների թիվն այդ տարիներին միայն Նաիրի Զարյանով չէր սահմանափակվում: Հանդես եկան բազմաթիվ ուրիշ «վայ» քննադատներ, որոնք իրենց հրապարակային ելույթներում և մամուլում անխնա հարվածներ հասցրին Բակունցին այն օրերին, երբ Երևանի բանտի դաժան պայմաններում նա ողբերգականորեն ապրում էր իր կյանքի վերջին ծանրագույն պահերը: Այսպես, 1937 թ. ԽՍՀՄ գրողների միության վարչության չորրորդ նիստում ելույթ է ունենում ՀԽԳՄ վարչության առաջին քարտուղար Գ. Աբովը և դարձյալ հոլովում Բակունցի անունը. «Նացիոնալիստ-դաշնակ Բակունցը իր «Ծիրանի փողը» պատմվածքում հակադրում է այսպես կոչված Թուրքահայաստանը ներկա Խորհրդային Հայաստանին, կոչ անում վերադառնալ այդ երկիրը»: Բակունցի հասցեին ամենուրեք հնչում են մշտահոլով մեղադրանքներ՝ հակահեղափոխական, տրոցկիստ, նացիոնալիստ, միջազգային կապիտալի գործակալ, վնասարար, գրողների միությունը շահատակությունների ասպարեզ դարձնող և այլն: Բակունցի դեմ ուղղված այդ բոլոր հոդվածների հեղինակները, լրացնելով միմյանց, միանշանակ նույն մեղադրանքներն էին հորջորջում, և նրանց շրջանակը օրըստօրե ողբերգազավեշտական չափերով համալրվում էր, քանի որ Բակունցին և ազգային մյուս գրողներին քննադատելը դարձել էր շատերի համար ցանկալի դիրքեր ձեռք բերելու կամ սեփական ես-ը քաղաքական հետապնդումներից փրկելու եղանակ:

Բանտի դաժան կանոնակարգը, բռնությունները, ճնշող հարցաքննությունները, առերեսումները, հոգեկան ծանր մտատանջությունները և շուրջը տիրող կասկածի մթնոլորտը բոլորովին հյուծել էին Բակունցին. կեղեքված էր ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Իսկ անարժան ու չնչին հակառակորդներն օրըստօրե ավելի էին բարձրացնում իրենց աղմկալի ձայնը: Ադ օրերի ոչ մի ցուցմունք-վկայություն չի կարող ստվեր նետել Բակունցի պես մարդու բարոյական պայծառ նկարագրի վրա. ո՞վ գիտե, հոգեկան ու ֆիզիկական ինչպիսի՜ վիճակում է եղել Բակունցն այդ հարցաքննությունների ժամանակ: Հայտնի է՝ անմարդկային ինչ եղանակներով էին մեղադրյալներից պոկում ցուցմունք-վկայություններ. ՆԳԺԿ-ի մարմիններին հանձնարարված էր՝ կալանավորներին խոշտանգել այնքան, մինչև նրանք հաստատեին իրենց վերագրվող մեղադրանքները. «Հոկտեմբերի սկզբին,— պատմում է Բակունցի կինը,— ես նրան ուտելիք և սպիտակեղեն տարա և հետ ստացա պայուսակը՝ կեղտոտ սպիտակեղենով: Գալով տուն՝ սպիտակեղենի վրա հայտնաբերեցի արյուն: ....Ակսելն անճանաչելի էր, բոլորովին կոտրված, կիսախելագարի պես: Կարծես ուրիշ մարդ էր» (Ռ. Իշխանյան, Մեր ինքնության գլխավոր նշանը, Ե., 1991, էջ 270—271): Առերեսումների, մեկը մյուսի դեմ հորինվող ցուցմունքների, ֆիզիկական բռնի ուժի գործադրության, հարազատների աքսորի ու մահվան սպառնալիքների՝ խելագարության հասցնող մթնոլորտում քչերը կարողացան պահպանել ոգու կորովը: ➥ էջ 6

Ամեն մեկս մի թզենի ենք...

Այդ օրը քաղաքն արթնացավ առանց քահանայի: Շատերը չիմացան՝ ինքն էր հեռացել, թե՞ իրեն տարել էին:

Քաղաքը դատարկ էր: Վաղնջական ժամանակներից զանգերը միշտ ղողանջել էին քահանայի ներկայությամբ: Այդ առավոտ զանգերը չէին ղողանջում: Զանգերը հնչում էին դատարկ, անհոգի... Չէին էլ գուժում...

Հոտը մոլորված էր, բայց կենսունակ: Ձիերը վրնջում էին ամեն օրվա պես, կանայք քչփչում էին ամեն օրվա պես:

Քաղաքը, ըստ ավանդության, երեկոյան խմել էր Նեռի տված ջուրը... ու կուրացել:

Հոտը փնտրում էր իր հովվին ու չէր գտնում:

Զանգերը էլի ղողանջեցին:

Քահանան, ինչպես միշտ, կանգնած էր եկեղեցու գավթից դեպի գլխավոր դուռը տանող ձախ սյան կողքին, կանգնած էր խոնարհ ու անվրդով:

Ճերմակ աղավնին սյունից սյուն էր թռչում, որ չվանդակեն:

Զարմանալի խաղաղ էր եկեղեցու բակը: Քամին բերում էր տուղտի ու մասրենու կորած բուրմունքը:

Ոչ մեկը չէր տեսնում եկեղեցու դռան ձախ կողմում կանգնած քահանային, թունավոր ջուրը փակել էր բոլորի աչքերը:

Եպիսկոպոս Սմբատյանի հայացքի ներքո՝ եկեղեցու բակի աղբյուրի ջուրը մյուռոնի համ ուներ:

Հրապարակում հարսանիք էր: Եկեղեցում՝ ժամերգություն: Քահանան հսկում էր երեկոյան ժամերգությունը: Հագին բաց մոխրագույն կապա էր...

....Օ, ե՞րբ է Մսրը եղել
Մեր հիմքում նման հոր փորող,
Մեզ ոչ ոք այսպես չի նեղել,
Ինչպես այդ հարճորդին կարող:
Սև կառքի կառապան լկտի,
Բազմել է ցարերի գահին,
Լափում է որձակը մեր մտքի,
Զրկում է մեզ հունդից ազգային:
Ի՞նչ անի նստվածքը ռամիկ՝
Կավատի դավից անտեղյակ,
Արև էր, դառել է մահիկ,
Աշխարհում՝ մնացել մենակ:
Օ՜, ո՞ւր եք, աստղեր, արևներ,
Իջնում է ազգիս երեկոն,
Եվ եղավ չլսված մի Նեռ
Թիֆլիսցի նեղճակատ կինտոն...

Ե. Չարենց, 1937 թ.

1920—1930-ական թթ. հայ ազգային գիտակցությունը խորհրդային վարչակարգի կողմից ահաբեկչության էր ենթարկվում բոլոր առումներով, գործադրվում էին բոլոր միջոցները՝ իսպառ ջնջելու ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի հիշողությունը: Թուրքիայի կողմից ցեղասպանված ժողովրդի սերունդը վերստին սպանդի էր ենթարկվում նրա դաշնակից ԽՍՀՄ-ի կողմից, իսկ ցեղասպանության նվազագույն հիշողությունն անգամ դատապարտվում էր իբրև ռասսիզմ: Արևմտահայաստանի, ինչպես և Կարսի, Նախիջևանի, Ղարաբաղի, Ջավախքի՝ Հայաստանին վերամիավորման գաղափարը, գաղթականության վերադարձի հույսը ծննդավայր դատապարտելի էին որպես հայկական նացիոնալիզմ: Այս մեղադրանքով հազարավորների հետ թիարան քշվեց նաև Խորհրդային Հայաստանի ստեղծագործ փաղանգը՝ Չարենց, Բակունց, Թոթովենց, Մահարի, Զաբել Եսայան, Լեռ Կամսար և ուրիշներ:

Անժխտելի է՝ 1937 թ. օգոստոսի 9-ը մեր ժողովրդի պատմության մեջ նույնն է, ինչ 1915 թ. ապրիլի 24-ը. այդ տարեթվերը խորհրդանշում են հայ ազգային փաղանգի ձերբակալությունն ու սպանդը խորհրդային և թուրքական բռնատիրությունների օրոք...

«Ծա՜նր է, շա՜տ ծանր.... Փաստը մնում է անշրջանցելի. ես մեկուսացված եմ: Այստեղից սկսվում է ամոթի տանջալի գիտակցումը, միլիոն անգամ բանտարկման փաստի վերապրումը: Օտարված եմ հանրությունից, ամոթը ստվեր է գցում նաև արված լավի վրա, ստվերում քո մասին եղած հիշողությունը: Մտածում ես մեկ ժամ, երկու, երեք, մեկ օր, երկու օր, մտածում ես հիմարանալու աստիճանի, մինչև հիշողությունդ փուլ է գալիս, և չգիտես՝ գիշե՞ր է, թե՞ցերեկ, միայն պարզ գիտակցում ես, որ կյանքը մնաց փակ դռան ետևում.... Միտքս միշտ տանջալիորեն շաղափում է ֆիզիկական ցավի աստիճանի հասնող միևնույն խոհը. ի՞նչ է լինելու ինձ հետ: Արդյո՞ք ինձ հնարավորություն կտրվի գործով, այսինքն՝ գրական աշխատանքով ապացուցել, որ ես գրականության թշնամի չեմ: Գոյության միակ նպատակը մնում է գրականությունը.... Ինձ գրելու և կարդալու հնարավորությո՛ւն տվեք, ինձ գիրք ու մատի՛տ տվեք...»,— սրանք տողեր են ձերբակալված Ակսել Բակունցի բանտային դիմում-նամակից՝ գրված 1936 թ. հոկտեմբերի 6-ին: Իր կյանքի ծանրագույն պահերին անգամ Բակունցը հավատարիմ մնաց իր էությանը, գլուխ չխոնարհեց ոչ մի բռնակալի և ոչ մի բռնակարգի առջև, քայլեց իբրև մերկ ճշմարտություն ժամանակի փոքր ու մեծ դիմակահանդեսներում, մնաց այն, ինչ կար՝ իր պայծառ մտքով ու անբասիր վարքով...

Հասմիկ Մելքոնյան

Իսահակ վրդ. Պողոսյան. ***Պատումներ***

Ոչինչ էլ չէր պատահել

Քահանան համրընթաց մոտենում էր բանտի մռայլ միջանցքին, որտեղ հարյուրավոր մարդկանց հայացքներին խառնաշփոթ մտածումներ էին դրոշմված, այնպես, որ ոչ մեկը չէր կարող իսպառ թաքցնել իր ներսում եղածը:

Շատ-շատերն իրենց ընտրությունը կատարել էին առանց խուսանավելու: Եվ ճակատագիրը նրանց բերել էր այստեղ, ուր միջանցքները տանում էին դեպի մենության խորքերը:

Ոմանց շուրթերից ժամանակ առ ժամանակ լսելի էին լինում աղոթքի ցածրաձայն մրմունջներ, ոմանք լուռ ափսոսանք էին ապրում, ոմանք, տարիներ շարունակ բախվելով անդեմ անցյալին ու անհույս ապագային, չէին կարողանում հաշտվել իրականության հետ: Եվ ըստ էության կտրված լինելով արտաքին աշխարհից՝ միայն քահանայի ներկայությամբ է, որ մխիթարվում էին: Բայց մի բան միանշանակ և ընդհանրական էր. յուրաքանչյուրի սրտում թաքնված էր միայն իրեն հայտնի ճշմարտությունը:

Երբ դուռը բացվեց, դատապարտյալը նստած էր անկողնում. դեմքը՝ խոժոռ, աչքերը՝ փակ: Քահանան, կանգնելով նրա դիմաց, դյուրությամբ զգաց ներսում ծանրացած տառապանքը:

— Թադևո՛ս, եղբա՛յրս, ինչպե՞ս այստեղ հասար: Ինչո՞ւ ես ապրում այդ դժոխքում՝ առանց փրկության հույսի,— հարցրեց խոր կարեկցանքով:

Քահանայի ձայնը բեկված էր: Տպավորություն էր, որ ինքն անգամ չէր հավատում իր իսկ արտաբերած խոսքերին: Թադևոսը երկար լռելուց հետո բարձրացրեց գլուխը: Նրա արյունակալած աչքերում ցավն ու անձկությունն արցունքի տեսքով սառել, մնացել էին: Այդուհանդերձ ոչինչ չասաց: Քահանան հանդարտ նստեց նրա կողքին՝ առանց ակնկալիքի, առանց մի խոսք ասելու: Նստեց, խաղաղ լռեց, բայց այդ լռությունն ավելի խոսուն էր:

Երբ լքեց խուցը, հասկացավ, որ մի տարօրինակ շնչառությամբ է համակվել: Բանտապահների լուռ անտարբերությունն այլևս չէր անհանգստացնում նրան: Ով է գալիս, ով է գնում, դեմքի ինչպիսի արտահայտություն ունի... Միայն զղջում էր, որ չի կարողացել շահել երիտասարդ քննիչի բարեհաճությունը՝ երեք նոր կալանավորվածներին տեսակցելու համար: Հասել էր մինչև խցերի դռներին, բայց չէր կարողացել բառ, տառ, հայացք անգամ փոխանակել:

— Հիմա ի՞նչ,— ասել էր կարճ ու հատու:

— Նրանք դեռ պատրաստ չեն,— հետևել էր նույնքան կարճառոտ պատասխանը:

Դժկամությամբ տարուբերել էր գլուխը...

— Ես եմ որոշում՝ ով ո՛ւմ պետք է հանդիպի, ու դրա համար հիմքեր կան,— դարձյալ հետևել էր քննիչի խոսքը:

Քահանան այլևս բան չէր խոսել: Այդ պահին միայն մի մտածում էր ունեցել. «Ինչո՞ւ մարդիկ պետք է այս օրի հասնեն, ինչո՞ւ...»: Դա մի հարց էր, որին մարդկանց սփոփելու ճանապարհին ինքն էր տարբեր առիթներով պատասխանել և այնքա՜ն լրիվությամբ:

Օրը տարաժամել էր: Քահանան գլխիկոր հեռանում էր, բանտապահները դարձյալ անցնում էին նրա կողքով: Ոմանք փորձում էին խոսակցել, ոմանք՝ ժպտալ, ոմանք՝ շնորհակալ լինել կամ հաջողություն մաղթել. ասես ոչինչ էլ չէր պատահել:

Նրան այլևս չէր անհանգստացնում կալանավորվածներին չտեսակցելու փաստը, թեև դա էլ տակավին իր ուրույն տեղն ուներ: Նա ավելի տագնապած էր այլ բանից՝ ասես ոչինչ էլ չէր պատահել...

Ճշմարտությունը, Սուտը և Կեսճշմարտությունը

Հին ժամանակներում երեք ընկերներ կային՝ Ճշմարտությունը, Սուտը և Կեսճշմարտությունը: Մի անգամ նրանք որոշեցին մրցել՝ տեսնելու, թե ով ավելի մեծ համարում ունի մարդկանց կյանքում:

Ճշմարտությունը կառուցեց քաղաքներ, հայտնագործեց օրենքներ, սերմանեց սեր ու բարություն, բայց այս բոլորի ուսանումն ու պահպանումը մարդկանցից խիզախություն, ջանք ու եռանդ էին պահանջում: Շատերը չէին էլ հասկանում նրա ասածներն ու արածները, բայց մի ներքին մղումով ընդունում էին, որ առանց նրա ամեն բան կորցնելու է իր դերն ու նշանակությունը:

Սուտն սկսեց խոստումներ շռայլել, սարսափներ տարածել և ձևանալով առաջնորդ ու փրկիչ՝ իր հետևից շատ մարդկանց տարավ: Այդուամենայնիվ, մարդիկ, ժամանակի ընթացքում ճանաչելով, մերժեցին նրան ու հեռացան:

Երբ հերթը հասավ Կեսճշմարտությանը, նա իր ուսերին գցեց Ճշմարտության հագուստը ու խոսելով Ստի լեզվով՝ շարժվեց բոլոր այն տեղանքներով, որտեղ ապրում էին մարդիկ: Նա մարդկանց հրամցնում էր միայն այն, ինչ ուզում էին լսել, և ամեն մեկն իր լսածն իրեն հարմար ձևով էր ընկալում: Այսպես՝ զարկ էր տրվում եսասիրությանը, արդարացվում էր երկչոտությունը, քողարկվում՝ անարդարությունը.... Մարդիկ ամենից ավելի սիրեցին նրա՝ ասելով. «Ահա ճշմարտությունը՝ առանց ցավի, և գիտելիքը՝ առանց պատասխանատվության»:

Տեսնելով այս ամենը՝ Սուտն ասաց.

— Կեսճշմարտությունն ինձնից շատ ավելի զորավոր դուրս եկավ: Նրան ավելի են վստահում:

Իսկ Ճշմարտությունը, լուռ հառաչելով, մտածեց. «Մարդիկ ըստ արժանվույն կգնահատեն ճշմարտությունը և կուսանեն տարբերել սուտն ու հատկապես կեսճշմարտությունը գեթ այն ժամանակ, երբ ստիպված կլինեն իրենց ուսերին տանել նրանց հետևանքների բեռը»:

Սպիտակ գահը

Շատ ժամանակ առաջ մի երկրում, որի անունը վաղուց ի վեր ոչ ոք չէր բարձրաձայնում, իշխանության եկավ մի մարդ՝ Ընկրկում անունով: Նա խոստացավ արդարություն, գթություն ու անողոք պայքար անարդարության դեմ, և հաջողվեց շահել մարդկանց համակրանքը: Ժողովուրդը խանդավառվեց՝ կարծելով, թե իր համար վերջապես նոր ժամանակներ են եկել: Բայց կարճ ժամանականց, բարձրանալով փղոսկրյա գահի վրա, Ընկրկումը ձևավորեց կառավարող յուրայինների մի խումբ, որոնք թեև սկզբնապես դարձան «ժողովրդի ձայնը», բայց հետագայում երբևէ հաշվի չնստեցին մարդկանց հետ: Անհնազանդներին ու ըմբոստացողներին մեղադրեցին հակապետական քարոզի ու գահը հափշտակել ցանկանալու մեջ և բանտարկեցին: Իսկ դժգոհողներին ասացին, թե իրավունքը ոչ միշտ է հանրությանը հասանելի:

Այնպես եղավ, որ մի օր առաջ եկավ մի մտածող՝ Դիմադարձ անունով, որը տպագրեց մի գրքույկ՝ «Սպիտակ գահի ստվերը» վերտառությամբ: Այստեղ նա գրում էր, որ «Ոչ մի գահ էլ մաքուր ու ապահով չէ, քանի դեռ նրա տակ ամբարված լռություն կա: Իսկ ժողովրդի լռությունը ոչ թե իշխանության հաղթանակի վկայությունն է, այլ հիասթափված լինելու նշան»: Թեև գրքույկը կարճ ժամանակում լայն տարածում գտավ, սակայն հետագայում արգելվեց: Իսկ հեղինակը ձերբակալվեց՝ հասարակական պառակտում սերմանելու պատճառաբանությամբ:

Այդուամենայնիվ ժողովուրդը չընդվզեց. ոչ մի զանգվածային բողոք, ոչ մի անկարգություն տեղ չգտավ մարդկանց կյանքում: Բայց ժամանակի մեջ քաղաքները դարձան լուռ ու անհույս, մարդկանց դեմքերը՝ համր ու հնազանդ, մշակույթն ու գրեթե ամեն բան՝ ձևական:

Ու մի օր էլ թագավորը վերջապես հասկացավ, որ թեև ինքը դեռ գահին է, բայց շուրջբոլորը դատարկ է: Ոչ ոք չի հավատում, չի անսում և չի արձագանքում իրեն: Այդ ժամանակ հարցրեց խորհրդականներից մեկին.

— Նրանք դեռ ինձ սիրում են, այնպես չէ՞:

Խորհրդականը խոնարհվեց.

— Նրանք լռում են, տեր: Եվ լռությունը երբեմն սիրո և հարգանքի նշան է:

Այդուհանդերձ թագավորին հաջողվեց խորհրդականի աչքերի մեջ կարդալ իր հարցի իրական պատասխանը՝ անվստահություն, վախ և անսահման ատելություն, որը մեծապես ահաբեկեց նրան:

Շատ կշարունակվեր այս ամենը, թե ոչ, ոչ ոք չգիտի, բայց հաջորդ օրվա առավոտյան թագավորական գահը սովորականից ավելի էր փայլում... ➥ *էջ 8*

Յակոբ Պատրիարք Նալեան. ***Ներելի մեղքերու մասին***

Ներելի մեղքը փոքրագոյն յանցանք է, որ մարդուն դժոխքի պարտական չ'ըներ, ինչպէս, օրինակ, փոքրիկ տղաները, որոնք անգիտութեամբ կը մեղանչեն, իսկ մեծ մարդոց պարագային, ինչպէս դատարկաբանութիւնը, ծաղրածութիւնը եւ շատախօսութիւնը կամ տգիտութեան եւ անկարութեան պատճառով եղած մեղքը [դժոխքի պարտական չեն ըներ]: Սակայն պոռնկութիւնը, որ երբեմն տկարութեան պատճառով կ'ըլլայ, մահացու մեղք է: Բայց զգոյշ եղիր, քանի որ ինչպէս ծաղիկներէն պտուղ յառաջ կու գայ, այդպէս ալ ներելի մեղքերու սովորութենէն՝ մահացու մեղք: Որովհետև շատ յաճախ բամբասանքէն մարդ մեռած է: Բոլոր մեծ բաները փոքր բաներէն յառաջ կու գան, եւ իւրաքանչիւր մեծ բան փոքրէն կը մեծնայ: Ինչպէս որ կայծէ մը մեծ կրակ կը բորբոքի, կամ կաթիլէն լիճ կ'ըլլայ, այդպէս ալ ներելի մեղքերու սովորութենէն կամաց-կամաց մահացու մեղք կը ծնի: Օրինակ՝ խեղկատակութենէն եւ ցոփաբանութենէն՝ հայհոյութիւն. հայհոյութենէն՝ կռիւ, իսկ կռիւէն՝ արիւնահեղութիւն: Տակաւին, ներելի մեղքը միայն բերանինը չէ, այլ՝ աչքերունը, ականջներունը, քիթինը եւ շօշափելիքներունը:

Աչքերուն ներելի մեղքն է՝ ծածուկ կերպով նայիլ ոեւէ կնոջ՝ առանց ցանկալու միտում ունենալու, որ սակայն եթէ քիչ մը երկար նայեցար, ու սիրտդ պղտորեցաւ, բայց հաւանութիւն չի տուիր, ներելի է. իսկ եթէ հաւանութիւն տուիր, մահացու է: Աղքատ մը տեսար եւ ողորմութիւն չի տուիր, քանի որ չունէիր. սակայն, եթէ խօսքով չմխիթարեցիր, ներելապէս մեղանչեցիր: Մեղաւորին տեսար չար գործ ըրած ատեն, աչքդ տեսաւ, բայց սիրտդ չկսկծեցուց հոգիդ, եւ կամ տեսար մեղաւորին պատիժն ու ուրախացար եւ չվախցար պատիժէն, ներելապէս մեղանչեցիր:

Ականջներուն ներելի մեղքն է՝ թէեւ չբամբասեցիր, չհայհոյեցիր, սակայն բամբասողին միամտաբար ականջ դրիր եւ եթէ հաւանութիւն տուիր, մահացուօրէն մեղանչեցիր, իսկ եթէ հաւանութիւն չտուիր, ներելապէս մեղանչեցիր: Այսպէս է նաեւ հայհոյելը, տրտունջ, գանգատ եւ զազրաբանութիւն լսելը: Կամ եթէ բարի խրատներու եւ քարոզի ժամանակ ծուլութեամբ քնացար, այսինքն՝ որպէսզի չլսես քնանաս, մահացուօրէն կը մեղանչես եւ ո՛չ թէ ներելապէս:

Քիթին ներելի մեղքը ծաղիկներու եւ անուշահոտ բաներու հոտէն հաճոյք ստանալն է, ո՛չ թէ ատոնց վերաբերելով Աստուծոյ փառքին համար, այլ հոտոտելիքներուն հեշտութեան համար. սակայն քիթով հեշտանալն ու իգանալը մահացու մեղք է, եւ կամ բղջախոհութեան պատճառով իւղեր հոտոտալ, եւ կամ աղքատներու հոտէն զզուիլ ու քիթը փակել: Թէեւ բնութիւնը կը գարշի վատ հոտէն, սակայն եթէ հոտին չդիմացար Աստուծոյ փառքին համար, ներելապէս մեղանչեցիր:

Ի վերջոյ, այս իմացիր, որ այն բանը որ հոգիին ու մարմինին շահ չէ եւ քիչ մը վնասի մօտ է, ներելի մեղք է:

Մեծամեծ վէմերէն կը խորշիս
եւ գետերէն զերծ կը մնաս.
թերևս աւազով սուզուիս
եւ առուներէն ընկղմիս:

Այն մեղքերուն մասին, որ կ'աղաղակեն Աստուծոյ

Առաջինը կամաւոր մարդասպանութիւնն է, ինչպէս Կայէնին Աբէլին սպաննելը, որու համար Աստուած ըսաւ, թէ՝ եղբօրդ արեան ձայնը երկրէն կը բողոքէ Ինծի: Ըսել կ'ուզէ, թէ վրէժխնդրութիւն եւ դատաստան կ'ուզէ:

Երկրորդը՝ սոդոմական չար մեղքը, ինչպէս Աստուած Աբրահամին ըսաւ, թէ՝ սոդոմացիներուն եւ գոմորացիներուն աղաղակը Ինծի հասաւ. որովհետև Աստուծոյ կանոնին հակառակ էր սոդոմացիներուն մեղքը: Թէեւ ամէն տեսակի մեղք Աստուծոյ դէմ է, սակայն արուագիտութիւնը թէ՛ Աստուծոյ դէմ է թէ՛ ալ բնութեան, ուստի բնութիւնը, չկարենալով մարսել զայն, Աստուծոյ՝ զինք ստեղծողին կ'աղաղակէ, թէ Դուն դատէ:

Երրորդը չափազանց կերպով ծառաներն ու սպասաւորները չարչարելն է, ինչպէս Աստուած Մովսէսին ըսաւ, թէ՝ Իսրայէլի որդիներուն աղաղակը ականջներուս հասաւ. եւ արդ, իջայ փրկելու համար զանոնք: Որովհետև թէեւ Աստուած թոյլ կու տայ, որ մարդ գերեվարուի, բայց գերեվարողին վրայ կը բարկանայ, եթէ չափէն աւելի չարչարէ, ինչպէս Եսայի մարգարէին բերանով բաբելացիներուն համար ըսաւ, թէ՝ Ես զանոնք քու ձեռքդ մատնեցի, իսկ դուն անոնց չողորմեցար, ծերերուն լուծը շատ ծանրացուցիր, այսինքն՝ տկարներուն լուծը (47.6):

Չորրորդը մշակներուն վարձատրութիւնը կտրելն է, ինչպէս Յակոբոս առաքեալ կ'ըսէ, թէ՝ ձեր մէջ եղող զրկուածը կ'աղաղակէ, եւ հնձողներուն բողոքը զօրութիւններու Տիրոջ ականջներուն հասաւ: Որովհետև մեծ անօրէնութիւն է, որ մարդ ուրիշներուն աշխատանքով հարստանայ ու անոր հոգեպահիկն ու օրականը կտրէ ու չտայ. այդպիսին կարծէք իր որդին իր աչքերուն առջև կը սպաննէ եւ իր մաքուր ունեցուածքին (դրամին) մէջ կրակ կը վառէ. անոր մարմինը կը սպաննէ, իսկ իր՝ հոգին:

Մարդ սպաննել, արուագէտ ըլլալ,
վարձատրութիւն կտրել, շատ չարչարել,
զԱստուած կը դրդեն՝ պատժելու համար
եւ կը բողոքեն դատաստան ընելու համար:

Այն մեղքերուն մասին, որ Սուրբ Հոգիին դէմ են

Աստուած ամենակարող, ամէնիմաստ եւ ամենաբարի է: Կարողութիւնը Հօր կը վերաբերի, իմաստութիւնը՝ Որդիին, եւ բարութիւնը՝ Սուրբ Հոգիին:

Տակաւին, թէեւ բոլոր մեղքերը Աստուծոյ դէմ են՝ երեքին եւ մէկին, սակայն, անկարողութեան մեղքը Հօր Աստուծոյ դէմ է, անգիտութեանը՝ Որդիին, իսկ մեղքը կամաւորաբար եւ կարողութեամբ գործելը՝ Սուրբ Հոգիին: Հետևաբար Սուրբ Հոգիին դէմ եղող մեղքը կամաւորաբար, գիտութեամբ եւ կարողութեամբ գործուած մեղքն է, եւ ասիկա՝ աներելի կ'ըսուի:

Նախ՝ Քրիստոս կ'ըսէ, թէ Հոգիին ուղղուած հայհոյութիւնը պիտի չներուի:

Երկրորդ՝ Պողոս առաքեալը կ'ըսէ, եթէ ճշմարտութեան գիտութիւնը ընդունելէն ետք կամակար միտքով յանցանք գործենք, այլևս ատոր համար մեղքերու պատարագ պէտք չէ, այլ՝ դատաստանի ահեղ ակնկալութիւնը:

Տակաւին, աներելի մեղքերու տեսակները, որ Սուրբ Հոգիին համար հայհոյութիւն կ'ըսուին, վեց կերպ են:

Առաջինը յուսահատութիւնն է. այսպէս էր Կայէնի ու Յուդայի մեղքը, քանի որ Կայէնը Աբէլին սպաննելէն ետք, ըսաւ Աստուծոյ, թէ՝ իմ մեղքս աւելի մեծ է, քան Քու թողութիւնդ, այլ խօսքով՝ մեղքս աւելի մեծ է, քան Քու ողորմութիւնդ: Իսկ Յուդան, յուսահատելով Քրիստոսի ողորմութենէն, գնաց ինքզինք կախեց ու խեղդուեցաւ: Սակայն մեղքերուն թողութիւն շնորհելը Սուրբ Հոգիին շնորհքէն է, եւ ով որ կ'ըսէ, թէ՝ մեղքերուս թողութիւն չըլլար, կարծէք թէ կ'ըսէ՝ Սուրբ Հոգին տկար է եւ չի կրնար իմ մեղքս ներել:

Երկրորդը յանդգնութիւնն է, որ է յամառութիւն, որ մարդ Աստուծոյ արդարութիւնը կ'ուրանայ եւ չարաչար Աստուծոյ ողորմութեան կ'ապաւինի՝ առանց բարի գործերու, առանց ապաշխարելու՝ կարծելով, թէ կը փրկուի, սակայն դժոխքի կ'արժանանայ: Կամ՝ ինքզինք ծով կը նետէ ու կ'ըսէ՝ եթէ պէտք է, թող Աստուած ազատէ զիս: Ասիկա զԱստուած փորձել է եւ Աստուծոյ արդարութիւնը ուրանալ է: ➥ *էջ 7*

Երաժշտության զարգացումը սուրբգրային ժամանակաշրջանում

Գյուստավ Մորո. Սալոմեի պարը, 1876 թ.

Սկիզբը՝ թիվ 14

Կանտորի (հրեական սինագոգում՝ գլխավոր երգիչ, որը հաճախ ղեկավարում է երգչախումբը) կամ քահանայի և ժողովրդի միջև անտիֆոնային երգեցողությունները ծագել են հրեական պաշտամունքի մեթոդներից: Անտիֆոնային երգեցողությունը երկու երգչախմբի կամ մեներգչի և երգչախմբի փոխնիփոխ երգեցողությունն է: Սա էլ իր հերթին ծագել է հին հունական ողբերգությունից, որտեղ սովորաբար երգչախումբը բաժանված էր երկու կիսաերգչախմբերի միջև (կիրառվել է նաև հին հրեական տաճարային երգեցողության մեջ): Մեր թվարկության սկզբին այն ներմուծվել է քրիստոնեական մշակույթ (հետառաքելական շրջանում Իգնատիոս Անտիոքացի Աստվածազգյացի, իսկ Կաթոլիկական Եկեղեցում՝ Ամբրոսիոս Մեդիոլանացու միջոցով):

Քրիստոնեական դարաշրջանի սկզբին իր գագաթնակետին հասած Տաճարի բարդ երաժշտությունը կատարում էր տղամարդ բարձրակարգ երգիչներից կազմված մեծ երգչախմբը, որին երբեմն միանում էին տղաներ, և այս ժամանակահատվածում Տաճարի նվագախումբն օգտագործում էր նաև բազմաթիվ գործիքներ:

Փիլոն Ալեքսանդրացին հիշատակել է Ալեքսանդրիայի մոտակայքում ծիսական հսկողությունների մասին, որոնք ներառում էին ճաշ և զույգ երգչախմբի կողմից հիմների երգեցողություն՝ որպես ուղեկցություն երթերին և գինարբուքներին:

Հայտնաբերված ամենավաղ պատկերագրական նշաններից է նավակի տեսքով տավիղը, որը գտնվել է շումերական կավե տախտակի վրա՝ թվագրված Ք. ա. 3000 թ.: Այս տավիղի ավելի վաղ պատկերը հայտնաբերվել է նաև ժամանակակից հարավարևմտյան Իրանում (Ք. ա. մոտ 3200 թ.): Պաղեստինում հայտնաբերվել են հելլենիստական դարաշրջանի երաժշտական գործիքների բազմաթիվ բեկորներ, որոնք մանրամասներ են ներկայացնում ծիսական երաժշտության վիճակի, բնույթի և ավանդույթի մասին: Այլ դեպքերում Աստվածաշնչում հիշատակված հրեական երաժշտական շատ գործիքներ նույնացվում են այլ երկրների՝ Եգիպտոսի և Բաբելոնի մշակույթներում հանդիպող նմանատիպ գործիքների հետ: Աստվածաշնչում հիշատակված որոշ գործիքների օրինակ կարելի է գտնել Դանիել 3:5-ում. «Երբ լսեք փողի, սրնգի, քնարի, ջութակի, տավիղի, տիկի և ամեն տեսակ նվագարանների ձայնը, վայր ընկեք և երկրպագեք այն արձանին, որ կանգնեցրեց Նաբուգոդոնոսոր թագավորը»:

Ըստ Սուրբ Գրքի՝ Հոբաղը քնարահարների և երգեհոնահարների հայրն էր (Ծննդ. 4:20–21): Քնարը Դավթի սիրելի գործիքներից էր, և դրա օգտագործման մասին Աստվածաշնչում հանդիպում է հարյուրից ավելի անգամ: Այն օգտագործվել է և՛ ուրախ, և՛ սգո արարողությունների ժամանակ, և դրա օգտագործումն իր բարձրագույն կատարելության է հասել Դավթի օրոք: Հենց քնարի քաղցր երաժշտությունն էր, որը Սավուղին զրկում էր իր մելամաղձությունից. «Եվ երբ Աստծու կողմից այն չար ոգին գալիս էր Սավուղի վրա, Դավիթը վերցնում էր քնարն ու նվագում իր ձեռքով, և հանգստանում ու լավ էր զգում Սավուղը, և չար ոգին հեռանում էր նրանից» (Ա Թագ. 16:23): Երբ հրեաները գերության մեջ էին Բաբելոնում, նրանք կախեցին իրենց տավիղները և հրաժարվեցին օգտագործել դրանք աքսորի ժամանակ, որոնք նախկինում տաճարում օգտագործվող գործիքների մաս էին կազմում. «Եվ թագավորը ալմուգ փայտերից ցանկապատներ շինեց Տիրոջ տան համար ու թագավորի պալատի համար և քնարներ ու տավիղներ՝ երգիչների համար. այդպիսի ալմուգ փայտ այլևս չբերվեց և չի տեսնվել մինչև այսօր» (Գ Թագ. 10:12):

Տավիղի դասի մեկ այլ լարային գործիք, որը նույնպես օգտագործում էին հին հույները, քնարն էր: Նմանատիպ գործիք էր վինը, որն ուներ մեծ տանձաձև մարմին, երկար վզիկ և լարավոր գրպան: Երաժշտական գործիքներ պատկերող մետաղադրամներ՝ Բար Կոխբայի ապստամբության մետաղադրամները, թողարկվել են հրեաների կողմից Հռոմեական կայսրության դեմ երկրորդ հրեական ապստամբության ժամանակ՝ 132–135 թթ.: ➥ *էջ 7*

Նաիրյան սիրո «հանցապարտները» կամ մի քանի դրվագ 1937-ից

➥ *էջ 4*

Պարզ է, որ Բակունցի ցուցմունքները նաև «խմբագրել են» ՆԳԺԿ-ի մարմինները, հարմարեցրել դրանք իրենց նպատակներին, ստիպել ստորագրել պատրաստի արձանագրությունների ներքո:

Բոլոր դեպքերում մի բան վստահությամբ կարող ենք ասել. թե՛ իր տված ցուցմունք-վկայություններում, թե՛ այդ օրերից պահպանված հուշ-պատառիկներում Ակսել Բակունցը կերպավորվում է ողբերգական անհատի դիմանկարով: Մտավոր այդ յուրահատուկ սպանդի մեջ ֆիզիկապես ու հոգեպես կեղեքված գրողը գնաց ինքնափրկության՝ ունենալով միմիայն մեկ նպատակ. «Ես չեմ սպառվել, որ ինձ հանգստացնեմ արդեն գրածներով: Թող նա հանգստանա, ով ոչինչ չունի տալու և չգիտի՝ ինչու ստեղծագործել: Ես գիտեմ, որ գրում եմ դեռևս չավարտված գործերի, սկսված և չավարտված գրքերի մասին: Բայց և գիտեմ, որ դիմում եմ կուսակցությանը՝ ինձ գթալու խնդրանքով ոչ անձնական շահերի համար: Ինձ գրելու և կարդալու հնարավորություն տվեք, ինձ գիրք ու մատիտ տվեք» (**Դ. Գասպարյան**, Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց, Մեղադրական գործ № 4131, էջ 55):

Ոչ ոք, սակայն, չէր ուզում լսել ինքնակեղեքող տառապանքի այս արդար ձայնը: Իզուր էր Բակունցն ստեղծագործելու հնարավորություն խնդրում. ամեն ինչ կանխորոշված էր վերջնականապես: 1937 թ. հուլիսի 7-ին՝ ընդամենը 25 որպես տևած հարցաքննությունից հետո, Բակունցը դատապարտվում է պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության: Դատավճիռն ի կատար է ածվում հաջորդ օրը՝ հուլիսի 8-ին: Մի ամբողջ օր Բակունցը վերապրել է իրեն սպասող վաղվա ողբերգությունը: Տասնմեկ ամիս Երևանի բանտում հոգեպես ու ֆիզիկապես խոշտանգված գրողը գնդակահարվում է տաղանդի ծաղկման բուռն շրջանում՝ 38 տարին նոր բոլորած:

«Ֆրանսիացոց լրտես ուզենաք՝ կլինեմ, ճապոնացոց կլինեմ, հաբեշների լրտես ուզենաք՝ կլինեմ, թուրքական լրտես չեմ լինի, չեմ լինի, չեմ լինի…» («Նորք», 1989, թիվ 12),– բանտախցից բանտախուց գոռում էր հարցաքննության տարվող Վահան Թոթովենցը:

Վահան Թոթովենցի ամերիկյան տարիները, Անդրանիկի թիկնապահ և թարգմանիչ լինելը, կամավորական կռիվներին մասնակցությունը Արևմտահայաստանում, Թիֆլիսում անգլիական օգնության կոմիտեում իբրև թարգմանիչ աշխատելը, անգամ «Հայաստան» թերթին աշխատակցելը բավարար հիմքեր էին՝ հերյուրելու զազրելի մեղադրականներ: Թոթովենցի «նացիոնալիստական» մտայնությունների դեմ խորհրդահայ միտումնավոր, ծախու գրաքննությունը մոլեգնում էր ամենուր՝ մամուլում, գրական, հասարակական ու քաղաքական ամբիոններից:

1936 թ. դեկտեմբերի 31-ին «Գրական թերթ»-ում «Դաշնակցական տականքը» վերնագրով հրատարակվում է Ա. Ոսկերչյանի հոդվածը, ուր Թոթովենցը մեղադրվում է որպես աջ տրոցկիստական, ահաբեկչական խմբակցության անդամ, նացիոնալիստ, շովինիստ, ֆաշիստ, ազգային ատելության և թշնամանքի քարոզիչ, գրական վիժվածք է համարվում նրա «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը: Այս ամենի ողբերգական հետևանքը Վահան Թոթովենցի գնդակահարությունն է ընդամենը 15 որպես տևած ձևական դատավարությունից հետո՝ 1938 թ. հուլիսի 18-ին՝ իր իսկ ծննդյան 44-րդ տարեդարձին...

«Ես նախանձում եմ Ստեփան Զորյանին, որ նրա ծննդավայրը՝ Դարաքիլիսան, այստեղ է, այս հողի վրա…. Մեր օրորոցը մնաց այն կողմը: Ու մենք ունենք մի մաշող կարոտ…. Ոչ ոք չի խոսում այդ կոտորածների մասին: Մինչդեռ մեր սրտից արյուն է կաթում, երբ հիշում ենք…. Ինձ հուզում են կոտորածները, ինձ հանգիստ չեն տալիս: Ես վեպ եմ գրում: Մինչև չգրեմ՝ հանգիստ չի իջնի ինձ վրա: Դա իմ հոգու պարտքն է, իմ խոշտանգված էության մի մասն է, որ ճչում, կանչում է ինձ»,– սրանք Վահան Թոթովենցի խոսքերն են՝ նրա հրապարակային ելույթից (**Ռ. Զարյան**, Հուշապատում, գիրք 2, Ե, 1977, էջ 217):

Ինքնակենսագրության ժանրը, որով գրված է Վ. Թոթովենցի վեպը՝ «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»-ն, անշուշտ, արտաքին կեղևն է միայն, որի միջուկում ցեղասպանության և բռնագաղթի հիշողությունն է, հայրենի կորուսյալ եզերքների կարոտն ու վերադարձի փափագը: Ինքնակենսագրական առերես տեսակը նաև գաղափարական դիմակայման միջոց էր ազգային ինքնության համահարթեցման ճանապարհին. որտեղից են սերում իրենք, ինչ ճանապարհ է պարտադրվել արևմտահայությանը, ինչ են թողել հետևում: Հետ նայելը գրաքաղաքական տվյալ բռնաշրջանում բառացիորեն աղե արձան դառնալու սպառնալիք էր, լինել-չլինելու իրողություն: Ինքնակենսագրությունը գրապատմական այդ շրջանում վերածում է ժողովրդի պատմության, հիշողությունը՝ հայրենիքի ոգեղեն և իրեղեն լինելության: Անհատական կենսագրությունը համընդհանրացնում է ժողովրդի պատմությունն ու ազգային ճանապարհը, ինքնակենսագիր գրողը դառնում ժողովրդի համահավաք կերպար, նաև ազգային հոգևոր ճանապարհի առաջնորդ:

Այլ կերպ ասած՝ ինքնակենսագրական ժանրով ցեղասպանության և բռնազավթված հայրենիքի հիշողության պահպանումը 1920–1930-ականների բռնաշրջանում քաղաքագիտական մտածողության գեղարվեստական կերպ էր, և անհատական ինքնապատումի շղարշի տակ 1920–1930-ական թթ. խորհրդահայ ինքնակենսագրական արձակն արծարծում էր համազգային նշանակության խնդիրներ, որոնք են՝ կորուսյալ առարկայական հայրենիքի դեմ՝ հոգևոր անկորուստ հայրենիք, կործանվող ազգային գաղափարաբանության ու պատմության դեմ՝ ազգային ինքնագիտակցություն ու հիշողություն, խորհրդային աշխարհաքաղաքացիության դեմ՝ ծննդավայրի և ծագումնաբանության վերահաստատում:

1937 թ. հուլիսի 26-ին ձերբակալվում է Եղիշե Չարենցը. մինչ այդ մի քանի անգամ ենթարկվել էր տնային կալանքի, հարցաքննությունների, առերեսումների: Թե՛ տնային կալանքում, թե՛ բանտում Չարենցն իրեն պահել է հերոսական ու վեհ՝ հակառակ բոլոր սպառնալիքների՝ ոչ մի ցուցմունք-վկայություն չտալով ընկերների դեմ, իսկ ազատության ժամանակ բողոքի ցույցեր էր անում՝ պահանջելով, որ իրեն էլ ձերբակալեն, երբ իր ընկերները ձերբակալված են... Բանտից արդեն, որտեղ զրկված էր տարիներ շարունակ օգտագործած սուր ցավերը թմրեցնող դեղերից, որտեղ նաև ֆիզիկական հաշվեհարդարի էին ենթարկում նրան՝ օր առաջ սպանելու համար, ինչը և ի վերջո տեղի ունեցավ, այսպիսի երկտող էր փոխանցում կնոջը. *«Ամուր եղիր, հարազատս, եթե նույնիսկ փողոց գցեն: Չ՞է որ միայն մենք չենք տառապում, այլև շատ շատերը....»*:

Թմրադեղերի բացակայությունը բանտում հանգեցրել է բանաստեղծի աղեստամոքսային ուղու քայքայմանը, խորացել են նաև նախկին հիվանդությունները՝ շարունակական պլևրիտը, լյարդի էխինակոկը, երիկամի բորբոքումը՝ հասցնելով թոքերի կատառային բորբոքման, որից էլ վրա է հասել մահը: Չարենցի վիճակը ծանրացել է նոյեմբերի 17-ին, ու նրան տեղափոխել են բանտի հիվանդանոց, ուր և առանց բժշկական օգնության, լքված, միայնակ, արյունաքամ և ուժասպառ մահացել է՝ չհասնելով գնդակահարության դատավճռի կայացմանը: Չարենցը մեղադրվում էր հակախորհրդային, տրոցկիստական, նացիոնալիստական գործունեության հոդվածներով, նաև՝ 17–65 հոդվածով, որ նշանակում է երկրի ղեկավարության դեմ ահաբեկչական գործողությունների նախապատրաստում: Նման հոդվածներով դատապարտվողները գնդակահարվում էին, հետևաբար՝ եթե Չարենցը չմահանար, պետք է գնդակահարվեր: 1936 թվականին «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» ստեղծագործության մեջ գրում էր.

Վաղ աղջամուղջն այնքան ըղձալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ,–
Ուր մեր Մ՛րևն է նոր սուզվում արյունալի,
Որպես կարմիր գլուխ գլխատվածի…

«1936 թվականի օգոստոսի 9-ի գիշերը ես ձերբակալվեցի.... Ես մեղադրվում եմ տեռորի և Հայաստանը Սովետական Միությունից անջատելու և կապիտալիստական աշխարհին միացնելու մեջ: Ես պիտի սպանեի Բերիային»,– «Ինքնակենսագրության» մեջ երգիծանքով հիշում է Գուրգեն Մահարին. *«....Թուղթ ու մատիտ չտեսա ես այդ տարիների ընթացքում, բայց անաշխատ էլ չմնացի: Աշխատեցի ես բահով, սղոցով, կացինով, եղանով, երկաթե ձողով, աշխատեցի կոմբայնի և սերմնազատիչի վրա, և երբ ձեռներս թուլացան, բրուտների համար ոտքով ցեխ հունցեցի.... Ես հասկացա, որ մարդն ավելի դիմացկուն է, քան քարը»:* Գուրգեն Մահարին աքսորի է դատապարտվում երկու անգամ. սիբիրյան ծանր աքսորը նրանից խլում է շուրջ 18 տարվա երիտասարդ կյանք ու ստեղծագործական բացառիկ հնարավորություն...

1930-ական թվականների ողբերգության վերքերում ցավ կա դեռ, արյուն կա տաք, և դեռ մխալու են սերունդների սրտերը, և ցավի հետ օրեցօր զորանալու է Չարենցի, Բակունցի, Թոթովենցի և հայրենասիրության համար դատապարտվածների ձայնը…

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բ. գ. թ., դոցենտ

Յակոբ Պատրիարք Նալեան. Ներելի մեղքերու մասին

➥ էջ 5

Այդպիսի մարդը կարծէք թէ կ'ըսէ՝ Սուրբ Հոգին թող իմ չար գործս պսակէ. եւ Սուրբ Հոգիին իր մեղքերուն մասնակից կ'ընէ: Դարձեալ՝ յանդգնութիւն է, որ մարդ իր կարողութենէն վեր եղող բանը յամառութեամբ կ'ընէ: Ինչպէս Սիմոն կախարդը կամեցաւ Քրիստոսի նման երկինք ելլել: Եւ կամ Մանիքոսը, որ պարսից թագաւորին խոստացաւ իր որդին կենդանացնել, սակայն սպաննեց. Ան, որ հաւատք չունէր, բայց կ'ուզէր առաքեալներուն գործերը կատարել: Այսպիսի մարդիկը կ'ուզեն ըսել, թէ Աստուած անիրաւ է, առանց վաստակի ու բարի պատերազմի՝ մարդուն պսակ կու տայ:

Երրորդը ճանչցուած [յայտնի] ճշմարտութեան դէմ մարտնչումն է: Ինչպէս ըսել, ես գիտեմ որ լոյսը բարի է, եւ մեղրը՝ քաղցր, սակայն ի՞նչ գործ ունիս հետս, ես լոյսին խաւար կ'ըսեմ եւ մեղրին՝ լեղի. այսպիսի մարդուն Եսայի մարգարէն վայ կու տայ [տես Ես. 5.20]: Եւ կամ՝ եթէ մէկը ըսէ, թէ՝ ես գիտեմ, որ զղջումը, խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը բարի են, բայց չեմ զղջար, չեմ խոստովանիր ու չեմ ապաշխարեր այն պատճառով, որ Աստուած չուրախանայ:

Եւ դարձեալ՝ մարդ մը ճշմարիտ հաւատքը կը ճանչնայ, բայց կը յամառի եւ ուղղութեան չի՛ գար: Ինչպէս հրեաները, որոնք Քրիստոսէ ու առաքեալներէն այնքա՛ն զարմանալի հրաշքներ տեսան, ի ծնէ կոյրին աչքերուն բացուիլը տեսան, սակայն չհաւատացին Քրիստոսի, այլ կոյրին ըսին, թէ՝ մենք գիտենք, որ այդ մարդը մեղաւոր է. ահա՛ բարիին չար ըսին: Տակաւին, առաքեալներուն ժամանակ միշտ կը հակառակէին եւ ընդդէմ կը կենային Սուրբ Հոգիի շնորհքներուն. այդ պատճառով Սուրբ Ստեփանոս Նախավկան բացայայտօրէն ըսաւ, թէ՝ դուք միշտ Սուրբ Հոգիին կը հակառակիք, որով ըսել կ'ուզէր, թէ՝ դուք մնայուն կերպով յայտնի ճշմարտութեան կը հակառակիք, որ աններելի մեղք է:

Չորրորդը եղբայրական շնորհներու նախանձն է, որ մէկը կը ջանայ, որ ուրիշ շնորհքներու չտիրանայ (ինչպէս Սուրբ Պօղոս առաքեալը կ'ըսէ, թէ՝ նախանձախնդիր եղէք շնորհքներուն, որոնք լաւն են), այլ կը նախանձի, թէ ինչո՛ւ համար եղբայրս ու հաւատակիցս այս շնորհքներուն կը հասնի: Ինչպէս Կայէնը Աբէլին նախանձեցաւ, թէ՝ ինչո՛ւ համար անոր պատարագը ընդունելի կ'ըլլայ, իսկ իմս՝ ո՛չ:

Հինգերորդը խստասրտութիւնն է, որ է քարասրտութիւնը. այն է, որ մէկը խրատ չի լսեր, ականջ չի դներ քարոզի, աստուածային շնորհքներու տեղիք չունենար, օրինակներէն չի վախնար, այլ իր սիրտը կը քարացնէ, որպէսզի ոչ մէկ բան ազդեցութիւն գործէ սիրտին վրայ: Ինչպէս ապառաժ քարին վրայ ոչինչ կը բուսնի, քանի որ չի կրնար ջուր ծծել, այդպէս ալ խստասիրտ մարդուն սիրտը, եթէ նոյնիսկ աստուածային բարկութեան նետը դպնայ, որ կակուղ եւ յարմար խրատ է, երբեք սիրտին մէջ չի մտներ:

Ինչպէս մեծահարուստը Ղազարոսի օրինակէն չշահեցաւ, շուներէն չպատկառեցաւ, որ կը լիզէին երանելիին եւ վէրքերը կը սրբէին, իսկ ինք, քարսիրտ ըլլալով, երբեք ուշադրութիւն չէր դարձներ, տես, թէ վերջաւորութեան ի՞նչ արգելքի հանդիպեցաւ:

Իրապէս, ինչպէս Սուրբ Պօղոսը ըսաւ, թէ՝ խստութեանդ եւ սիրտիդ անդարձութեան համեմատ բարկութեան օրը Աստուծոյ բարկութիւնն ու արդար դատաւորութիւնը պիտի գանձես: Այս պատիժը գիտնալով՝ Դաւիթ մարգարէն կը խրատէր խստասիրտ մարդիկը ու կ'ըսէր, թէ՝ մարդո՛ց որդիներ, մինչև երբ խստասիրտ պիտի մնաք, ինչպէս նանրութիւնը կը սիրէք եւ ստութիւնը կը փնտռէք:

Վեցերորդը անզղջութիւնն է, որով մէկը կամ չարաչար յոյս կ'ունենայ, թէ շատ կ'ապրի, կամ կ'ամչնայ խոստովանելէ եւ կամ կնատաբար կը վախնայ դարձեալ մեղքերու մէջ իյնալէ, [կ'ըսէ, կը մտածէ] թէ ի՞նչ շահ խոստովանելէ: Տակաւին, մեծ յիմարութիւն է մարդուն համար ըսել, թէ ես շատ կ'ապրիմ, Աստուծոյ դատաստանին չի հասնիր. այլև, Քրիստոսի դէմ կը խօսի, որ կ'ըսէ. արթուն մնացէք, որովհետև չէք գիտեր, թէ տանտէրը երբ կու գայ: Տակաւին, շատ աւելի յիմար է ան, որ մարդէ մը կ'ամչնայ ու չի խոստովանիր ու տիեզերական ահեղ հրապարակին ու անաչառ ատեանին ժամանակ խայտառակ կ'ըլլայ: Ինչպէս Աստուած մարգարէի մը բերանով կ'ըսէր՝ բոլոր մարդոց առջև պիտի յայտնեմ անառակութիւններդ ու խայտառակութիւններդ:

Տակաւին, ալ աւելի յիմար է ան, որ կնատաբար կը վախնայ կրկին անգամ իյնալէն [սայթաքելէն] ու չի խոստովանիր. սակայն երկչոտ վաճառականը ո՛չ կը շահի եւ ո՛չ ալ կը վնասէ. բայց երկչոտը չխոստովանելով մնայուն կերպով կը վնասէ. այսպէս՝ ցորենը չի ցաներ՝ ըսելով, թէ հողը բերք չի տար. կրակ չի վառեր՝ ըսելով, որ հրդեհ կը վառի. հաց չուտեր՝ ըսելով, թէ՝ կը փսխեմ: Եւ մանաւանդ քարասրտութեամբ անզեղջ կը մնայ ու յորդորողներուն չի լսեր ու առանց զղջալու կը մեռնի: Իրապէս, այսպիսի մարդուն թողութիւն չի հասնիր, քանի որ կ'ուրանայ թողութիւն տուողին՝ Սուրբ Հոգիին շնորհքը:

Այսպէս էր Քրիստոսի չար ուրացողը՝ Յուլիանոսը, որ սատկած ժամանակ գիտցաւ, թէ Քրիստոսէ սատկեցաւ՝ ըսելով՝ յաղթեցիր Գալիլիացի, յաղթող խոստովանեցաւ եւ չզղջաց:

Այսպէս՝ այս կեանքին մէջ իւրաքանչիւր չզղջացող մարդ, որ չի ճանչնար Քրիստոսի ողորմութիւնը, մահուան օրը կամայ թէ ակամայ կը ճանչնայ Անոր արդարութիւնը:

Աւելին՝ այդպիսի չզղջացող մեռնողի հոգիին՝ ողորմութիւն, պատարագ, յիշատակում եւ ուրիշ բարեգործութիւններ ազգականներուն կողմէ կատարուած՝ շահ չունին, որովհետև կոյր մարդուն համար արեգակին լոյսը շահ չունի:

Ինչպէս Եզեկիա թագաւորն ու Դաւիթ մարգարէն ըսին, ո՛չ թէ մեռելները պիտի օրհնեն քեզ, այլ ողջերն են, որ պիտի օրհնեն Քեզ, Տէր: Եւ թէեւ առանց զղջալու մեռնողին ողորմութիւնն ու պատարագը օգուտ չունին, սակայն ողորմութիւն տուողները օգուտ ունին:

Դարձեալ՝ չզղջացող մարդը կամ մեղքերու շատութենէն յուսահատած է, կամ Եկեղեցւոյ Խորհուրդը [Ապաշխարութեան] չի՛ ընդունիր, կամ սադուկեցի է եւ յարութիւնը կ'ուրանայ: Սուրբ Հոգիին կարողութեան դիմաց մեղքերու շատութիւնը կաթիլ մը ջուր է, քանի որ Սուրբ Հոգիին շնորհով է մեղքերու թողութիւնը:

Ան որ Եկեղեցւոյ Խորհուրդը կ'արհամարհէ, ան եւս կը մեղանչէ Սուրբ Հոգիին դէմ, որ Եկեղեցւոյ խորհուրդներուն սրբարար զօրութիւնն է: Ան, որ յարութիւնը կ'ուրանայ, ան եւս կը մեղանչէ Սուրբ Հոգիին դէմ, որովհետև Անոր կարողութիւնը կ'ուրանայ:

Տակաւին, Քրիստոսի տուած վճիռին համաձայն՝ Սուրբ Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը այն է, որ մարդ մը բարիին չար կ'ըսէ, ինչպէս նաեւ Աստուծմով եղած հրաշագործութիւնը կը համարէ, թէ սատանայէն եղած է: Ինչպէս հրեաները Քրիստոսի ըսին, թէ՝ Բեհեղզեբուղին՝ դեւերու իշխանին միջոցով կը հանէ դեւերը:

Դարձեալ, Սուրբ Հոգիին կը հայհոյէ ան, որ կ'ըսէ, թէ արարած է, ինչպէս Մակեդոնը բարբանջեց:

Տակաւին, ինչպէս Աստուծոյ Հոգին արարած է ըսելը հայհոյութիւն է՝ ուղղուած Սուրբ Հոգիին, այդպէս ալ բարի մարդուն անունը՝ թէ՛ հաւատքի առումով եւ թէ՛ գործի, եթէ ոեւէ մէկը աղտոտէ՝ լոյսին խաւար ըսելով, ճշմարիտ հաւատացեալին՝ հերձուածող, ողորմած մարդուն՝ սնափառ, ողջախոհին՝ բղջախոհ, եւ այլն [հայհոյութիւն է]:

Իրապէս, այդպիսին Սուրբ Հոգիին հայհոյող է, որովհետև Սուրբ Հոգիին տուած շնորհքներուն վրայ արատ կը դնէ, որ թողութիւն չունի:

Սակայն Աստուած չարէն չի՛ յաղթուիր, այլ՝ Իր ողորմութենէն. հետևաբար թէեւ կրնայ թողութիւն ըլլալ վերը թուարկուած մեղքերուն համար, բայց շատ դժուար. քանի որ երբեք չենք լսած, թէ ներուած ըլլայ մարդու մը հայհոյութիւնը, որ Սուրբ Հոգիին դէմ է:

Սուրբ Հոգիին հայհոյութիւնը
կամ յաւիտեան չի ներուիր
եւ կամ առատ արցունքներով եւ
մինչև մահ զղջալով կը ներուի:

Շարունակելի

«Քրիստոնէական Ուսանելի», 1806
Յակոբ Պատրիարք Նալեան

Աշխարհաբարի վերածեց
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

Երաժշտության զարգացումը սուրբգրային ժամանակաշրջանում

➥ էջ 6

Դրանցից բացի՝ կար նաև սաղմոսարան. լարային մեկ այլ գործիք, որը Սուրբ Գրքում հիշատակվում է գրեթե երեսուն անգամ: Համաձայն Հովսեփոսի հաղորդած տեղեկությունների՝ այն ուներ տասներկու լար, և նվագում էին փետուրով, այլ ոչ թե ձեռքով: Հարվածային գործիքների թվում էին զանգերը, ծնծղաները, սիստրումը, թմբուկը, ձեռքի թմբուկները և դափերը: Այդ գործիքները, որ հարվածների ձևով պայմանավորված՝ տարբեր կերպ էին հնչում, պատմության ընթացքում օգտագործվել են նվագախմբերում: Թմբուկն օգտագործվում էր տոնական առիթների համար և համարվում էր կանացի գործիք: Ըստ Ելից գրքի՝ երբ Իսրայելի որդիները դուրս եկան Եգիպտոսից և անցան Կարմիր ծովը, Մարիամը ձեռքը վերցրեց թմբուկ, և բոլոր կանայք դուրս եկան նրա հետևից՝ թմբուկներով և պարով:

Պարն անմիջականորեն կապված էր երաժշտության հետ և տարբեր իրադարձությունների կարևոր կողմն էր, չնայած իրական պարային շարժումները մանրամասնորեն ոչ մի տեղ նկարագրված չեն: Պարի մասին քիչ ապացույցներ կան՝ համեմատած Եգիպտոսում հանդիպող բազմազանության հետ: Այնուամենայնիվ, կան բազմաթիվ աստվածաշնչյան նկարագրություններ այն դեպքերի մասին, որոնք ոգեշնչել են պարելու: Աստվածաշնչում, Միշնայում և Թալմուդում պարը հիշատակվում է տարբեր համատեքստերում, իսկ Մեգիդոյում, Նեգևում և Իսրայելի այլ վայրերում վերջերս հայտնաբերված պատկերագրական մնացորդները ցույց են տալիս պարող կերպարներ: Դատավորների 21:21-ում նկարագրվում է մի տոն, որի ընթացքում սովորական էր խաղողի այգիներում պարելը: Պարը նաև կապված էր ռազմական հաղթանակների տոնակատարությունների և հայրենիք վերադարձող հերոսներին դիմավորելու հետ: Ելք 15:20-ում Մարիամը և մյուս կանայք երգում և պարում են թմբուկների ուղեկցությամբ՝ նշելու Կարմիր ծովի բաժանումը, որը փրկեց Իսրայելի ժողովրդին. Հեփթայեի դուստրը պարում էր՝ հաղթական մարտերից վերադարձող հորը դիմավորելիս (Դատ. 11:34): Իսրայելի կանայք դուրս եկան պարելու Սավուղի և Դավթի առջև, երբ նրանք վերադարձան փղշտացիների դեմ մարտից (Ա Թագ. 18:6): Թագավորը և նրա հպատակները նույնպես ոգեշնչվեցին պարով, երբ Ուխտի տապանակը հետ վերադարձվեց Երուսաղեմ (Բ Թագ. 6-րդ գլ.):

Աստվածաշունչը հիշատակում է երաժշտության բազմաթիվ կիրառություններ, այդ թվում՝ գովասանքի երգեր, հաղթանակի երգեր, սգո երգեր և, ամենից առաջ, սաղմոսներ: Պարերը նույնպես տարածված երաժշտական արտահայտություն էին երգեցողության և գործիքային երաժշտության համադրության հետ մեկտեղ: Հետագա ժամանակներում նաև կար զուտ վոկալ երաժշտություն, որը որոշ ժամանակ գերակշռում էր: Երաժշտությունը կարևոր դեր էր խաղում հրեաների ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական կյանքում: Թագավորներն ու ժողովրդի այլ առաջնորդները սովորաբար գովաբանվում էին երգերով և ծնծղաներով, իսկ Աստվածաշնչում նկարագրված տաճարում կատարվող շատ բարդ երաժշտական ծառայությունները պաշտամունքի կարևոր մաս էին կազմում: Օրինակ՝ Աստվածաշնչում նկարագրություններ կան ինը քնարահարներից, երկու տավղահարներից և ծնծղահարներից բաղկացած նվագախմբի մասին: Որոշ հատվածներում անգամ հիշատակվում են կանանցից բաղկացած երգչախմբերի մասին պատմություններ՝ զուգորդված երգեցողության և պարի հետ՝ տղամարդկանց հարվածային գործիքների նվագակցությամբ:

Տաճարի երգչախմբի երգացանկը բաղկացած էր սաղմոսներից, տաղերից և Սուրբ Գրքի այլ բանաստեղծական հատվածներից, չնայած այն կարող էր պարունակել որոշ ոչ կանոնիկ տեքստեր: Ասում են, որ սաղմոսների ընտրությունը որոշվել է արարչագործության առաջին յոթ օրերին Աստծո գործունեությամբ և դրանց վերաբերող տողերով:

Երաժշտության պատմության մեջ եզակի է տաճարի երաժշտության մաքրագործող և մեղքերը քավող ուժի հանդեպ անսասան հավատը, որը վերագրվում է թե՛ երգեցողությանը, թե՛ գործիքներին: Երաժշտությունը պետք է զերծ լիներ թերությունից և խուսափեր կախարդական տարրերից: Նույնիսկ քահանայապետի հանդերձի վրա էր զանգակը պատկերվում. «Պատմուճանի քղանցքի վրա շուրջանակի մի ոսկե զանգակ և մի նուռ, մի ոսկե զանգակ և մի նուռ լինեն: Ահարոնը թող այն կրի իր վրա՝ պաշտամունքի համար, և նրա ձայնը լսվի Տիրոջ առաջ սրբարան մտնելիս ու դուրս գալիս, որպեսզի Ահարոնը չմեռնի» (Ելք 28:34–35): Ըստ Փիլոնի և Հովսեփոսի՝ զանգերը ներկայացնում էին տիեզերական ներդաշնակությունը:

Միշնայի բնագրերի համաձայն՝ վաղ շրջանի երաժիշտները՝ թե՛ երգիչները, թե՛ գործիքավորողները, խստորեն վարժված էին հմուտ երաժիշտներ դառնալու համար, որոնց միջին ուսուցումը տևում էր հինգ տարի: Աստվածաշնչի պատմաբան Ալֆրեդ Սենդրեյը նշում է խիստ կազմակերպված մեծ երգչախմբերի մասին և կարծում, որ նվագախմբերի աննախադեպ աճը գործնականում անհնար կլիներ առանց երկարատև, մեթոդական նախապատրաստության: Սա որոշ գիտնականների հանգեցրել է այն մտքին, որ Սամուել մարգարեն այն դպրոցի ռահվիրան էր, որտեղ սովորում էին ոչ միայն մարգարեներ և սրբակենցաղ մարդիկ, այլև սրբազան ծեսերի երաժիշտներ: Այս հանրային երաժշտական դպրոցը թերևս ամենավաղ գրանցվածն էր պատմության մեջ, որը սահմանափակված չէր քահանայական դասով, ինչպես հովիվ Դավիթի պարագան է, որ դառնում է Սավուղի պալատական երաժիշտը:

Այս ժամանակահատվածում ժամանակակից իմաստով երաժշտական նոտագրություն գոյություն չուներ: Սակայն եբրայական այբուբենը թույլ է տալիս օգտագործել հատուկ նշաններ՝ ցույց տալու, թե ինչպես պետք է կատարվի երաժշտությունը: Այբուբենը բաղկացած է բաղաձայններից և կիսաբաղաձայններից, իսկ ձայնավորները նշվում են կետերով և գծիկներով՝ տառերի վերևում և ներքևում: Ձայնավորների նշաններից բացի՝ մի շարք այլ նշաններ, որոնք կոչվում են մասորական, վերաբերում են ոչ թե առանձին նոտաների, այլ մեղեդային մասնիկներին կամ խմբերին: Այդ մասնիկները դարեր շարունակ փոխանցվել են երգիչներին բանավոր ավանդույթով և առաջին անգամ կոդավորվել 16-րդ դարում: Մեռյալ ծովի ձեռագրերը ևս պարունակում են նշաններ, որոնք նման են վաղքրիստոնեական աղանդների ծիսական գրերի նշաններին՝ ամրապնդելով այն ենթադրությունը, որ ազգակից մշակույթների ժողովուրդներն ընդհանուր երաժշտական ժառանգությանն են հաղորդ եղել:

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Իսահակ վրդ. Պողոսյան. Պատումներ

↩ էջ 5

Լույսը և հույսը ցրում են խավարը

Բանտախցում լռություն էր: Միայն երբեմն լսվում էին երկաթյա դռների հեռավոր ճռռիկն ու կաթսայով ջուր բերող հսկիչի քայլերը: Խցի պատերն իրար ագուցված սֆինքսի էին նման, իսկ ճաղերը՝ վեր ընձյուղված աղոթող ձեռքի մատների, ուր լույսը չի մոլորվում, այլ դառնում է հուշ, ինչպես հնացած հացի վերջին կտորը: Տարիներն այստեղ ոչ թե անցնում էին, այլ ներծծվում մարդու մեջ, ինչպես ժանգը՝ երկաթի:

Չորս հոգով նստած էին իրար դիմաց, լուռ, ասես շունչները պահած լինեին:

Շաբաթը մեկ անգամ քահանան էր գալիս, անաղմուկ ներս էր մտնում, գլուխ էր խոնարհում ու նստում պատի մոտ: Նա լսում էր խցի շնչառությունը՝ մեղմ ու զսպված, ինչպես ծովի ձայնը գիշերվա խորքում: Ոչ ոքի չէր դատապարտում. պարզապես խոսում էր Աստծուց ու Նրա ներելուց: Այդ անգամ էլ նստեց, բացեց իր մաշված գիրքը, բայց չկարդաց: Խոսքը երբեմն ավելորդ է: Նրա ներկայությունն ավելի խոսուն էր...

Հետո սկսեց խոսել.

— Աստված ձեզ չի լքել,— ասում էր նա մեղմ՝ ձեռքը տանելով գրպանի փոքրիկ սրբապատկերին,— Նա այնտեղ է, որտեղ մարդիկ նույնիսկ իսպառ մոռացել են լույսի ու հույսի մասին: Դուք դատապարտված չեք անհուսության, բայց դատապարտված եք լռության, քանի որ միայն լռության մեջ ու լռության միջով է բացվում Աստծու դուռը:

Տղաներից մեկը գլուխը բարձրացրեց, աչքերը՝ մռայլ, բայց շարունակ քննող:

— Լռությա՞ն:

Քահանան գոհությամբ ժպտաց, քանի որ հարուցել էր նրա հետաքրքրասիրությունը: Դա ժպիտ էր մի մարդու, որը խավարի ներսում լույս էր նշմարել:

— Շշուկն էլ Աստծու հրաշքն է: Երևակայեք, թե շշուկով որքա՞ն բան է կատարվում աշխարհում: Ես, անշուշտ, նվիրական բաներից է, որ խոսում եմ: Մեր ժամանակներում էլ Աստված հաճախ շշուկով է գործում՝ այցելելով ամենքիս խղճի ամենախոր զնդանները:

Չորսի հոգում էլ մի անսովոր իրարանցում առաջ եկավ: Այդպես պատահում է, երբ աշնան քամին շարժում է մերկ ծառերի կատարներն ու տերևները...

Մեկը հիշեց մոր հոգնատանջ ձեռքերի բույրը, մյուսը՝ տան գիշերվա անդորրը, երրորդը՝ մանկության տարիները:

Չորրորդը՝ ամենաամրակազմը, հարցրեց.

— Իսկ ի՞նչ անի մարդը, որը ներումի է սպասում, բայց սիրտը քար է կտրել:

Քահանան մի պահ փակեց գիրքը, նրան նայեց, ապա ասաց.

— Քարը նույնպես լսում է, որդյա՛կ: Բայց ժամանակն ու մշտական մի կաթիլ ջուրը բավական են, որ ճեղքեն այն...

Մյուսները ևս ոգի առան ու սկսեցին հարցեր տեղալ ու աշխուժանալ:

— Եթե Աստված իսկապես տեսնում է մեզ, ապա ինչո՞ւ պիտի ների,— ասաց նրանցից մեկը:

Քահանան մի պահ լուռ մնալուց հետո ասաց.

— Որովհետև Նա համակ սեր է ու չի սպասում, որ դուք միանգամից կատարյալ դառնաք: Նա սպասում է, որ դուք փորձեք, փորձառությամբ զորանաք, ինչպես որ մարդիկ նախ ծնվում, երեխա են լինում, հետո միայն՝ երիտասարդ ու հասուն տարիքի: Այնպես որ Աստված ձեզ հետ է նույնիսկ այստեղ...

Երբ քահանան հեռացավ, խցում դարձյալ լռություն տիրեց: Բայց այս անգամ լռությունը սառն ու դատարկ չէր: Նրա հետևից ճաղերի միջով կարծես թե ներս էին սահել լույսի մի պատառիկ, հույսի մի նշխար... ու մնացել էին:

Մոռացված լուսաբաց կամ ներսի բանտը

«Ով ուզում է ազատ լինել,
նա իսկապես ազատ է»
Ժան Ժակ Ռուսո:

Դուռը դանդաղ, ճռնչալով բացվեց, դատապարտյալը թեքվեց, բայց կանգ չառավ. շարունակեց գետնին նստած խնամել փոքրիկ ծաղկանոցը: Ներս մտավ նախ՝ բանտապահը, ապա՝ մի սևազգեստ մարդ՝ ձեռքին մաշված մի Սուրբ Գիրք: Զարմանալիորեն մի տարօրինակ զգացում համակեց քահանային. վայրը, չնայած իր աղոտ քարերին ու երկաթե դռներին, իրականում ոչ թե բանտ է, այլ ավելի շատ լաբիրինթոս՝ կառուցված մեղկ հիշողությունների, մարդկային սխալների և մոռացության համախառը ճարտարապետությամբ:

— Բարի օր, տղե՛րք,— մեղմ ասաց նա, ու ձայնը կարծես սոսնձվեց, մնաց խցի հին պատերին:— Կարող եմ փոքր-ինչ նստել ձեզ հետ:

— Եթե խցի պատերը չեն վախեցնում, նստի՛ր,— կիսահեգնական ձայնով ասաց մեկը՝ անկյունում նստած, գլուխը խոնարհած:

Քահանան նստեց հին աթոռակին: Նա խաղաղ էր, բայց աչքերի խորքում հոգնածություն էր նկատվում:

— Գիտե՞ք՝ ինչքան եմ մտածել,— ասաց նա,— բանտախուցը մարդուն չի ուղղում: Եթե նա ուզում է փոխվել, կփոխվի, եթե ոչ, քարե ու երկաթե պատերն անգամ չեն կարող խանգարել:

Գրիգոր ծերունին, որ սովորաբար լուռ էր մնում, շշնջաց.

— Իսկ մենք... մենք փոխվե՞լ ենք, Տե՛ր հայր:

Քահանան վշտագին ժպտաց:

— Ոմանք՝ այո: Ոմանք ուղղակի ավելին են հասկացել: Դա էլ արդեն բավական է: Երբեմն մարդն ուղղակի լսված լինելու կարիք ունի:

— Դու ինձ մի՛ հարցրու՝ լսել ե՞ն ինձ,— հանկարծ բղավեց անկյունում նստածը՝ զայրանալով:— Չեն էլ ուզել հասկանալ: Փակեցին, խաչ քաշեցին վրաս ու հիմա ուզում են, որ ուղղվե՞մ: Ինչի՞ համար: Որ էլի չլսե՞ն:

— Խաղաղվի՛ր,— մեղմ ասաց ներկաներից մեկը:— Չի նշանակում, որ եթե աշխարհն անարդար է, մենք էլ պետք է այդպիսին դառնանք: Ես էլ եմ դրա զոհը, հո գիտես, բայց դա ինձ համար պատճառ չէ՝ ատելու ամենքին:

Քահանան հիմա էլ նրա կողմը նայեց:

— Քեզ դատապարտել են, բայց մեղքը քոնը չէ: Հիշի՛ր՝ Աստված տեսնում է նույնիսկ այնտեղ, որտեղ ոչ ոք չի տեսնում:

— Հենց միայն Աստված էլ տեսնում է:

— Ճշմարտությունը, եթե չի կարևորվում, ուրեմն գոյություն չունի: Իսկ ամեն սուտ, եթե հարյուր անգամ կրկնվի, սկսում է ապրել:

— Աստված գուցե և տեսնում է,— վրա բերեց Գրիգոր ծերունին,— բայց մա՛րդը պետք է տեսներ: Կնոջս մահվան օրը ես տանն էի, բայց ոչ նրա կողքին: Ու չկարողացա ոչ մի բան անել: Բա ի՞նչ անեմ հիմա... սպասեմ արդարությա՞ն: Իմ խուցն արդեն իմ տունն է դարձել: Արդարությունը մի գրադարան է՝ լի փակ գրքերով: Բայց իմ գիրքը ոչ ոք չկարդաց:

— Արդյոք գիտե՞ք, որ հիշողությունը կարող է ավելի ծանր պատիժ լինել, քան բանտը,— ասաց քահանան՝ նայելով Գրիգոր ծերունուն, որի աչքերում տագնապի ու հաշտության մի անմեկնելի լծորդում կար:— Երբ մարդն իր ներսում խաղաղ է, այնտեղ է գալիս նաև արդարությունը,— ապա նայելով խցի փոքր պատուհանի՝ հավելեց,— եթե մարդը հոգով չի հասկացել՝ ինչ է սխալը, նույնիսկ ազատության մեջ կմնա բանտարկյալ: Ձեր խուցն իրականում բանտ չէ: Դա մի հայելային տարածք է, որտեղ մարդը հանդիպում է ինքն իր հետ:

— Իսկ եթե ժամանակը շղթայված է ստին, որտե՞ղ փնտրել ճշմարտության ճանապարհը,— վրա բերեց մյուս խոսակիցը:— Ինչպե՞ս հասկացնել, որ այստեղ մարդիկ բանտարկված են ոչ թե իրենց մեղքերի պատճառով, այլ ուրիշների լռության:

Քահանան մի պահ լռեց:

Այդ միջոցին ներկաներից մեկը մի փոքրիկ տուփ հանեց: Մեջը չորացած մանուշակներ էին՝ մնացած անցյալ գարնանից:

— Սրանց այստեղ եմ աճեցրել,— ասաց,— որովհետև ուզում էի հիշել՝ ինչ կա ներսումս: Ոչ թե դրսի անարդարությունը, այլ ներսումս եղած գեղեցկությունն ու հավատը... Որ մի օր ինչ-որ մեկն իմանա՝ ես էլ մարդ եմ եղել, ոչ թե միայն թիվ:

Քահանան վեր կենալով՝ մոտեցավ նրան, ձեռքը դրեց ուսին.

— Դու արդեն իսկ ավելի ազատ ես, քան նրանք, ովքեր քեզ դատապարտել են: Աստված է մեր բոլորի միակ ճշմարիտ դատավորը: Ժամանակն էլ Նրա ձեռքում է: Արդարությունը կարող է ուշանալ, բայց Տիրոջ աչքում ոչ մի ազնիվ ապրում անտես չի մնում: «Ճանաչեք Ճշմարտությունը, և Նա մի օր կազատի ձեզ»,— ասում է Ավետարանը:

Քիչ անց բանտապահը բացեց դուռը: Քահանան դուրս եկավ, ու խցում դարձյալ լռություն տիրեց: Բայց այս անգամ լռությունը տարբեր էր՝ հուսառատ, խաղաղ ու խոհական:

«Էս ծաղիկները՝ ճիշտ ինձ պես, դուրս են եկել ոչ այնքան պարարտ, մութ ու ցուրտ հողի տակից: Բայց նրանք չեն մեղադրում հողին, որ բավական պարարտ չէր, ցուրտ էր կամ մութ էր»,— մտածեց դատապարտյալը խաղաղ լռության մեջ...

Կիսասարկավագի հանդերձանքն ու ծիսական պարագաները

Կիսասարկավագությունը Հայ Եկեղեցու հինգերորդ նվիրապետական աստիճանն է: Համաձայն Մաշտոց ծիսամատյանի՝ այն տրվում է եկեղեցու դասում՝ բեմի առջև. «....գան ի դասն առաջի բեմին», և ավելին է, քան նախորդ պաշտոնները՝ դռնապան, երդմնեցուցիչ, ջահընկալ, ընթերցող:

Արարողակարգն սկսվում է «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» (ԳՁ) շարականով, ապա ընթերցվում են աստվածաշնչյան դրվագներ, Ավետարան: Նվիրյալի համար աղոթք է կարդացվում, ձեռնադրող հոգևորականը խնդրում է, որ Աստված ձեռնադրյալին շնորհի հեզություն, խոնարհություն, պարկեշտություն և իմաստություն: Այնուհետև եպիսկոպոսն անձին շնորհում է բազկուրար, որը դրվում է նվիրյալի ձախ բազկին: Կիսասարկավագության աստիճան ունեցող անձը, համաձայն Մաշտոց ծիսարանի, իրավունք է ստանում եկեղեցում քարոզ ասելու, խնկարկելու, պատարագչին զգեստավորելու, դատարկ սկիհին դիպչելու և Պատարագի ժամանակ սպասավորելու:

Գևորգյան ճեմարանի սաները կիսասարկավագության արժանանալիս

Կիսասարկավագներն զգեստավորվում են դպրական շապիկով, իրենց ձախ բազկին կրում բազկուրար, որը խորհրդանշում է Քրիստոսի լուծը (այն, ի տարբերություն սարկավագների, կրում են չորրորդ մասի չափով): Բազկուրարը սովորաբար երկծալ վիճակով է օգտագործվում:

Ահա մի հատված կիսասարկավագական ձեռնադրության աղոթքից, երբ ձեռնադրող եպիսկոպոսը խրատում է ձեռնադրյալին՝ ասելով. «Տե՛ս, որդյա՛կ, ինչպիսի խորհրդին կանչվեցիր, քանի որ վերջին ծառայությունից ավելիով բարձրացար, այժմ արթնությամբ մնա՝ որպես եկեղեցու պաշտոնյա: Սթափվի՛ր ծուլությունից, ողջախո՛հ եղիր հեշտասիրության նկատմամբ: Զգո՛ւյշ եղիր, որպեսզի Առաջադրության հացը, որը Քրիստոս տվեց Իր եկեղեցուն, որպես կյանքի հաց, բավական չափով ժողովրդին տրվի՝ իբրև հաղորդություն, որ չլինի ավել կամ պակաս: Ամանը, որի մեջ մարմնակալը (մարմնակալը նույն գորգուրան է, որը լատիներեն corporalis բառն է՝ «մարմնական» իմաստով: Սա քառակուսի սպիտակ կտավ է, որը լատինածես եկեղեցում ժամարարը փռում է իր առջև և վրան դնում սկիհը, նույնիսկ սրբագործված նշխարը: Մեր եկեղեցում այն փռվում է սկիհի տակ՝ ի պատիվ և ի հարգանք սրբության) կլվանաս, ոչինչ թող չմերձենա, և ջուրը, որի մեջ լվացել ես այն, մկրտության ավազանի մեջ կլցնես: Եվ կոնքի մեջ, որտեղ կլվանաս սեղանի ծածկոցը, նույն տեղում կլվանաս նաև եկեղեցու սպասքը: Նրա համար եմ մատնանշում սրանք, որպեսզի զգուշությամբ կատարես քո գործերը և հաճելի լինես մեր Տիրոջը՝ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին. որին վայել է փառք, իշխանություն և պատիվ՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Կիսասարկավագների ձեռնադրություն մեր Եկեղեցում սովորաբար կատարվում է Սուրբ Ստեփանոս Նախասարկավագի տոնի նախորդ օրը: Սուրբ Ստեփանոսի տոնին նույն կիսասարկավագները ձեռնադրվում են սարկավագ:

Այսպիսով՝ կիսասարկավագներին ձեռնադրության ժամանակ տրվում է դատարկ սկիհ և մաղզմա, որով նրանց իրավունք է տրվում դիպչելու աստվածապաշտական և սրբազնագործ այդ սպասքներին: Նվիրյալին տրվում են նաև պատարագչի զգեստներ, խորհրդատետր (պատարագամատույց) և շուշփա (ասեղնագործված և գեղեցիկ զարդարված կտավ, որով եկեղեցում բռնում են Ավետարանը, սկիհը, խաչը և այլն), որոնցով նա իրավունք է ստանում զգեստավորելու պատարագիչ հոգևորականին և օգտագործելու վերոհիշյալ ծիսական պարագաները:

Եղիշե սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ
Սիրանուշ ԱԴՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.09.2025 թ.
Տպաքանակը՝ 1265